ՀԱՄԻԴԵԱՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄՏՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ
(XIX դարավերջ - XX դարասկիզբ)

Վարուժան Պողոսեան

Նրանց [հայերի] գործը մարդկութեան գործն է:

Անատոլ Ֆրանս

XIX դարի 90-ական թուականներին Աբդուլ Համիդ II-ի նախաձեռնութեամբ Օսմանեան կայսրութեան տարածքում արեւմտահայութեան նկատմամբ կիրառուած զանգուածային բնաջնջման քաղաքականութիւնը, որը հետագայում անշեղօրէն իրականացուեց երիտթուրքերի եւ քեմալականների կողմից, տասնամեակներ անց քաղաքագէտների եւ միջազգային իրաւունքի մասնագէտների կողմից բնութագրուեց իբրեւ մարդկային հասարակութեան պատմութեան մէջ արձանագրուած առաջին ցեղասպանութիւն: Համիդեան կոտորածների ընթացքն ու ծաւալը Ֆրանսիացի ականաւոր պատմաբան, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1897 թ.) Ալբեր Վանդալին (1853-1910) հիմք են տուել յայտարարելու, որ տեղի ունեցող աննախադէպ սպանդի համեմատութեամբ «1822 թ. Քիոսի, 1860 թ. Լիբանանի, 1876 թ. Բուլղարիայի կոտորածները ոչ այլ ինչ էին, եթէ ոչ մանկական խաղեր»[1]:

Այս պայմաններում, ինքնին հասկանալի է, որ օսմանեան կառավարութեան հայահալած քաղաքականութեան ամեհի ալիքները ոչ միայն արիւնաներկ են արել Արեւմտեան Հայաստանի տարածքն ու Օսմանեան կայսրութեան զանազան բնակավայրերում (մասնաւորապէս Կոստանդնուպոլսում) հանգրուանած հայկական համայնքները, այլեւ ալեկոծել եւրոպացի մտաւորականներից շատերի յոյզերը, յարուցել նրանց անսանձ զայրոյթը: Ի շարս այն երկրների (Անգլիա, Գերմանիա, Ռուսաստան եւ այլն), ուր համիդեան կոտորածներն անարձագանք չեն մնացել[2], առանձնանում է դեմոկրատական հինաւուրց աւանդներ ունեցող Ֆրանսիան, որտեղ հայերի եղեռնը խստագոյնս նշաւակուել է բազմաթիւ ականաւոր գրողների, քաղաքական ու կրօնական գործիչների, պատմաբանների կողմից[3]:

Սոյն յօդուածի բնաբանում վկայակոչուած Անատոլ Ֆրանսի խօսքերը խիստ յատկանշական են հայ ժողովրդի ողբերգութեանն ի տես՝ Ֆրանսիացի անուանի մտաւորականներից եւ քաղաքական գործիչներից շատերի գրաւած դիրքորոշումը բնութագրելու համար: Ըստ այդմ, մենք ստորեւ կը քննարկենք ցեղասպանութեան կազմակերպիչներին պախարակած ու մերկացրած Ֆրանսիացի ամենանշանաւոր այն գործիչների կարեւորագոյն ելոյթները, որոնք XIX դարի վերջերին եւ XX դարի սկզբներին նշանակալից աւանդ են ներդրել կործանման դատապարտուած արեւմտահայութեանն օգնութեան ձեռք մեկնելու գործում:

Հարկ է նշել, որ այս թեման հայոց ցեղասպանութեան պատմագրութեան մէջ, ըստ էութեան, չի ուսումնասիրուել: Անշուշտ, «Արշակ Զոպանեանը եւ հայասիրական շարժումը Ֆրանսիայում» գրքում ֆրանսահայ պատմաբան Է. Քայաջեանը մասնակիօրէն լուսաբանել է թեմային աղերսուող որոշ հարցեր, սակայն սոսկ Ֆրանսիացի գործիչների՝ Ա. Զոպանեանի հետ ունեցած առնչութիւնների բացայայտման կտրուածքով[4]: Ինչ վերաբերում է հայ պատմաբաններին, ապա նրանք, ժամանակ առ ժամանակ, մակերեսայնօրէն անդրադարձել են Ֆրանսիացի գործիչներից ոմանց հայանպաստ ելոյթներին: Անտեղեակ լինելով սակայն սկզբնաղբիւրներին, նրանք այս հարցի շուրջ իրենց տեղեկութիւնները քաղել են հայկական եւ ռուսական լրագրերից կամ առաւելագոյնն օգտագործել Ֆրանսիացի գործիչների ելոյթների ցաքուցրիւ թարգմանութիւնները, յաճախ սահմանափակուել հայ լրագրողների յօդուածների բովանդակութեան վերաշարադրութեամբ եւ իբրեւ այս ամենի հետեւանք՝ բաւարարուել հպանցիկ դիտարկումներով[5]:

Օսմանեան կայսրութիւնում հայկական կոտորածների կազմակերպիչներին նշաւակած, հայ ժողովրդի շահերն ու իրաւունքները սատարած Ֆրանսիացի գործիչների փայլուն համաստեղութեան մէջ իր ուրոյն տեղն ունի աշխարհահռչակ վիպասան Անատոլ Ֆրանսը (1844-1924), որի հետաքրքրութիւնը Հայ դատի նկատմամբ երբեւէ չի խամրել: Համիդեան կոտորածները նրան դրդել են ամենաեռանդուն ձեւով աջակցելու՝ ի նպաստ նահատակուող արեւմտահայութեանը Ֆրանսիայում ձեւաւորուող շարժմանը[6]: Պատահական չէ, որ 1900 թ. Ժան Ժորեսի, Ժորժ Կլեմանսոյի, Ֆրանսիս դը Պրեսանսեի եւ Է. դը Ռոբերտիի հետ մեկտեղ նա ընդգրկուել է Փարիզում հիմնադրուած եւ արեւմտահայութեան կոտորածները լուսաբանող «Պրո Արմենիա» լրագրի (1900-1914) ղեկավար մարմնի կազմում, որի գլխաւոր խմբագիրն էր Պիեռ Քիառը:

Սկսած 90-ական թթ. երկրորդ կէսերից Ֆրանսը պարբերաբար մասնակցել է ոչ միայն Ֆրանսիայում, այլեւ եւրոպական այլ երկրներում գումարուող՝ հայերի ցեղասպանութեան դատապարտմանը նուիրուած կոնֆերանսների աշխատանքներին, ջարդարարներին տուել հակիրճ, սակայն դիպուկ գնահատականներ: Նրա առաջին ելոյթն առնչւում է 1897 թ. մարտի 9-ին Փարիզի Աշխարհագրական ընկերութեան սրահում կայացած Արշակ Զոպանեանի՝ հայ ժողովրդի պատմութեանը եւ հայ գրականութեան անցած ուղուն նուիրուած հրապարակային դասախօսութեանը: Նախագահելով այս նիստը, բացման համառօտ խօսքում Ֆրանսը համիդեան կոտորածները բնութագրել է իբրեւ «դժնդակ եւ սիստեմատիկ, որոնց ընթացքում՝ իր հզօրութեամբ ու փոքրոգութեամբ սարսափազդու, ահաբեկչութեան նկատմամբ մեծ հակում ունեցող բռնակալ սուլթանի հրամանով զոհուել են երեք հարիւր հազար հայեր»[7]: Յիշարժան է, ի դէպ, նրա կողմից սուլթանին տրուած շատ աւելի սպառիչ մէկ այլ բնորոշում եւս. «Իր թշուառ ամենազօրութեան գրկում մշտապէս դողահար մի հրեշ՝ Աբդուլ Համիդ II-ը, որը սոսկում է իր յանցագործութիւններից եւ սփոփւում նոր յանցանքներին ի տես, 1893-1895 թթ. կախել, քառատել, կենդանի այրել է երեք հարիւր հազար հայերի եւ դրանից յետոյ նողկալի զգուշութեամբ հետամուտ է այս որբացած ժողովրդի սիստեմատիկ ոչնչացմանը»[8]: Արեւմտահայութեան եղեռնը, Ֆրանսի կարծիքով, իրականացւում էր նրա իսկ որդեգրած քաղաքական ծրագրով, որը «յանգեցնում էր ողջ հայ ազգութեան բնաջնջմանը»[9]:

Հայ ժողովրդի ոչնչացմանը խոչընդոտելու ամենաարդիւնաւէտ միջոցը մեծ գրողը համարել է Աբդուլ Համիդի ծրագրերի «մերկացումը եւ դրանց կենսագործման իւրաքանչիւր փորձի մասին ամբողջ աշխարհին իրազեկ դարձնելը՝ ա-

© National Library of Armenia

ռաջին իսկ նախանշանի ի յայտ գալուն եւեթ»: Հէնց այս հարցում է, որ նրա համոզմամբ, Ֆրանսիացիներն ի զօրու էին օժանդակելու հայերին, քանզի, ըստ նրա, «կոտորածներն անիրագործելի են դառնում, երբ դրանք ազդարարւում են աշխարհում»[10]: Միաժամանակ Ֆրանսն առաջարկել է ստեղծել հայկական համայնքների ամրակուռ միութիւն, որը նրանց հնարաւորութիւն կ'ընձեռէր հովանաւորելու «սպառնալիքի ներքոյ գտնուող իրենց եղբայրներին: Նրանց գործողութիւնը միայն այս պայմանով կարող է արդիւնաւէտ լինել, քանզի այն համընդհանուր կը լինի: Նրանց գործը մարդկութեան գործն է», – եզրափակում է նա[11]: Այս իսկ պատճառով, նա չի զլացել կշտամբանքի խօսքեր ուղղելու Ֆրանսիական կառավարութեան եւ մամուլի հասցէին, որոնք իրենց լռութեամբ հասարակութեանը «գրեթէ անտեղեակութեան մէջ» էին պահում[12]:

Իրադարձութիւնների զարգացմանը զուգընթաց՝ Ֆրանսի հետաքրքրութիւնը հայերի ճակատագրի նկատմամբ աճել է, մղելով նրան դարասկզբին ակտիւօրէն մասնակցելու Իտալիայում՝ Հայաստանի եւ Մակեդոնիայի հարցերին նուիրուած՝ միջազգային հաւաքների աշխատանքներին: 1903 թ. մայիսի 7-ին, Հռոմում՝ Մամուլի միութեան սրահում կազմակերպուած նիստում հանդէս գալով բացման խօսքով, նա կրկին անդրադարձել է համիդեան կոտորածներին, մատնանշել «ամօթաբեր լռութիւն պահպանող Եւրոպայի առջեւ՝ բնաջնջող սուլթանի գործած սպանութիւնները» եւ պահանջել յանուն հայերի իրաւունքների պաշտպանութեան «անհրաժեշտ ու վեհ գործի» կենսագործել Բեռլինի վեհաժողովի կողմից ընդունուած պայմանագրի որոշումները[13]: Միեւնոյն պահանջն է նա առաջադրել իր յաջորդ ելոյթներում: 1903 թ. մայիսի 21-ին, Հռոմի «Ադրիանո» թատրոնում ունեցած հրապարակային ելոյթում, օրինակ, հայերի՝ Բեռլինի վեհաժողովի կողմից ձեռք բերուած պայմանաւորուածութիւնների ի կատար ածմանը վերաբերող պահանջը Ֆրանսը համարել է «արդարացի» եւ կոչել Եւրոպայում ձեւաւորել այնպիսի հասարակական կարծիք, որը նպաստէր 61-րդ յօդուածի կենսագործմանը եւ ապահովէր «Հայաստանի եւ Մակեդոնիայի հանդարտութիւնը, ազատագրէր Եւրոպան անընդմէջ անհանգստութիւն պատճառող եւ վաղուց ի վեր Արեւելեան հարց կոչուող հասկացողութիւնից»[14]: Մէկ այլ առիթով՝ 1904 թ. յունիսի 29-ին Լոնդոնում գումարուած՝ Հայկական հարցին եւ Մերձաւոր Արեւելքում տիրող իրավիճակին նուիրուած միջազգային կոնֆերանսի մասնակիցներին յղած նամակում նա վերստին ակնարկել է մեծ տէրութիւնների՝ Օսմանեան կայսրութիւնում տեղի ունեցող իրադարձութիւններին միջամտելու անհրաժեշտութեան մասին. «Այն, ինչ դուք պահանջում եք, յստակ է, օրինական, գործնական... Արդեո՞ք հնարաւոր է, որ հովանաւորի դեր ստանձնած եւ հետեւաբար պատասխանատուութիւն կրող Եւրոպան... անզօր լինի սուլթանի երեք հարիւր հազար հպատակների սպանութեան հարցում»[15]:

Ինչպէս տեսնում ենք, ցեղասպանութեանը նուիրուած իր առաջին իսկ ելոյթներում Ֆրանսը ոչ միայն արեւմտահայերի կոտորածներն է դիտել իբրեւ պետական մակարդակով իրականացուող իրադարձութիւն եւ յանուն արեւմտահայութեան փրկութեան պահանջել տէրութիւնների կողմից գործնական քայլերի իրականացում, այլեւ հայերի ողբերգութեան բուն իսկ փաստը հասարակութեան լայն խաւերից քողարկելու համար քննա-

դատել է եւրոպական, այդ թւում, ֆրանսիական կառավարութիւններին:

Ֆրանսիայում համիդեան կոտորածները դատափետած մտաւորականների թւում առանձնանում է ֆրանսիացի ականաւոր քաղաքական եւ պետական գործիչ, 1875 թուականից ֆրանսիական ռադիկալների պարագլուխ, 1906-1909 եւ 1917-1920 թթ. Ֆրանսիայի վարչապետ, գրական հարուստ ժառանգութիւն թողած (թէ՛ քաղաքական, թէ՛ գեղարուեստական բնոյթի 26 գրքերի հեղինակ) Ժորժ Կլեմանսոն (1841-1919): Առաջին անգամ համիդեան կոտորածներին նա անդրադարձել է 1896 թ. Փարիզում լոյս ընծայուած՝ «Հայաստանի կոտորածները. ականատեսների վկայութիւններ» խորագիրը կրող եւ հայերի ցեղասպանութեան հաւաստի պատկերը ներկայացնող փաստաթղթերի ժողովածուին կից առաջաբանում, ուր ջարդարարներին տուել է խստաշունչ գնահատականներ[16]:

Խնդրոյ առարկայ գրքում զետեղուել են Արեւմտեան Հայաստանի եւ Կիլիկիայի քսան քաղաքներում (Տրապիզոն, Էրզրում, Երզնկա, Մալաթիա, Կեսարիա, Արաբկիր, Վան, Մարաշ եւ այլն) տեղի ունեցած իրադարձութիւններն արտացոլող հայ ականատեսների վկայութիւնները, այն է՝ իւրաքանչիւր բնակավայրից ստացուած մեկական նամակ: «Այս ժողովածոն,– ինչպէս նշում է Կլեմանսոն,– խիստ պատեհ է այն պահին, երբ սկսում են կրկին խօսել Հայաստանի վիլայեթներում տեղի ունեցող խռովութիւնների մասին: Յայտնի է, թէ ինչ իմաստ է պարունակում այս բառը: Այսպիսին է հայերի սիստեմատիկ կոտորածները մատնանշող պաշտօնական մեղմ արտայայտութիւնը: Այս տեսակէտից, անտեղեակ ձեւանալն այլեւս թոյլատրելի չէ»[17]:

Առաջին իսկ ելոյթում Կլեմանսոն Ա-

բեւմտեան Հայաստանում ծաւալուած իրադարձութիւնները բնութագրում է իբրեւ «նողկալի», «սոսկալի» տեսարաններ, իսկ հայ ժողովրդի կրած տառապանքները՝ «զարհուրելի մարտիրոսութիւն»: Նա ցաւով ընդգծում է, որ թերեւս անհնար կը լինի երբեւէ ունենալ XX դարի նախաշեմին «ապրող մարդկութեան համար անպատուաբեր այն տեսարանների ամբողջական պատկերը, որոնց թատերաբեմն է դարձել Անատոլիան անծայրածիր ամիսների ընթացքում»[18]:

1901 թ. «Պրո Արմենիա» լրագրում լոյս ընծայած «Արիւնոտ ձեռքը» յօդուածում Կլեմանսոն հայերի եղեռնը քննարկում է արդէն շատ աւելի լայն յետնախորքի վրայ եւ այն դասում XIX-XX դդ. սահմանագծում տարբեր աշխարհամասերում (Աֆրիկա, Ասիա) տեղի ունեցած զանազան զանգուածային բռնութիւնների շարքը: Օսմանեան կայսրութիւնում ընթացքի մէջ գտնուող անցքերի շուրջ նա մասնաւորապէս նշում է. «Փոքր Ասիան ականատես է լինում նողկալի տեսարանների, որոնք նուազ նշանակալից չեն: Այստեղ կարմիր սուլթանն է, որը քրիստոնէութեան բարեհաճ հովանաւորութեամբ, սրով ու հրով, ղեկավարում է բնաջնջումը Հայաստանի նահանգներում»: Ուստի, Աբդուլ Համիդին նա անուանում է «թագակիր աւազակ», որը «կողոպտում է քաղաքներն ու գիւղերը, կոտորում անզէն մարդկանց, եկեղեցիներում հրկիզում (ինչպիսի՛ անարգանքներից յետոյ) կանանց, երեխաներին, ծերունիներին, մարդկանց ստուար խմբերը քշում ամայի հարթավայրեր՝ առանց ծածկի, գոյութեան միջոցների, որոնց կեանքին վերջ է տալիս մականը՝ նրանց վերահաս որս դարձնելով գայլերի համար»[19]:

© National Library of Armenia

Արեւմտահայութեան ցեղասպանութեան մանրամասները մշտապէս տեսադաշտում պահող Կլեմանսոն 1904 թ. կոտորածների ժամանակաշրջանում առանձնայատուկ ուշադրութիւն է հրաւիրում օսմանեան կառավարութեան նենգ գործելամիջոցների վրայ, մերկացնում սուլթանի՝ ջարդերի պատասխանատուութիւնը հայերի վրայ բարդելու արատաւոր հակումը: Հայերի ապստամբութիւնն, ինչպէս նա նշում է, «նշոյլ անգամ չունի: Եթէ հայերն ապստամբեն, թուրքը խիստ երջանիկ կը լինի պաշտօնապէս այդ հաւաստելու համար»[20]:

Հռետորական եզակի տաղանդով օժտուած, պառլամենտական նիստերում ծաւալուած բանավէճերի ընթացքում քաղաքական ախոյեաններին բազմիցս ջախջախիչ հարուածներ հասցրած եւ դեռեւս 80-ական թուականների սկզբներին «Կառավարութիւններ տապալող» ու «Վագր» մականունների արժանացած Կլեմանսոյի ըմբոստ ոգին ամբողջութեամբ դրսեւորւում է նաեւ Հայկական հարցին նուիրուած նրա ելոյթներում: Ցղելով Բեռլինի վեհաժողովի կողմից ընդունուած պայմանագրի 61-րդ յօդուածը, նա տալիս է դրան յաջորդած անցքերի հետեւեալ դիպուկ գնահատականը. «Պայմանագրերը խաբէութիւններ են, սուլթանի խոստումները, բոլոր տէրութիւնների պատուիրակների կողմից ստորագրուած պայմանագրերի հովանաւորական բնոյթի յօդուածները՝ մեռեալ տառեր: Ոչինչ չի փոխուել, ոչինչ չի արուել. այնժամ, երբ մէկ վճռական խօսքը կարող էր բաւարար լինել այդչափ աղէտները կանխելու համար՝ նոյնիսկ ոչինչ չի ասուել»: Ընդդիմութեան մէջ գտնուող, 1893 թ. ի վեր դեպուտատական մանդատ այլեւս չունեցող Կլեմանսոյի շանթերը մասնաւորապէս անողոք են Ֆրանսիական պետութեան ղեկավարների հանդէպ. «Մեր կառավարողները ոչինչ չեն արել եւ, բացի դրանից, այսօր էլ ոչինչ չեն անում խոչընդոտելու համար այդ վայրագութեան կրկնութեանը»[21]: Նա հետեւողականօրէն դատապարտում է «մարդու իրաւունքների» օրրան Ֆրանսիային, որը չի համարձակւում «արդարութիւն պահանջել կամ նոյնիսկ մարդասիրական որեւէ խօսք ասել» եւ որի պաշտօնական ներկայացուցիչ, 1898-1902 թթ. դեպուտատների պալատի նախագահ Պոլ Դեշանելը սեղմում է Աբդուլ Համիդի՝ «մորթուած երեխաների արեան մէջ կարմրագունած» «արիւնոտ ձեռքը»[22]:

Զբաւարարուելով սակայն սոսկ իրադարձութիւնների նկարագրութեամբ կամ դրանց մեկնաբանութեամբ, Կլեմանսոն դեռեւս առաջին ելոյթում առաջադրում է ճգնաժամային իրավիճակը յաղթահարելու իր տարբերակները: Ըստ նրա, «Օսմանեան կայսրութիւնում ազգութիւնների եւ կրօնների միջեւ թշնամանքը դադարեցնելու միակ միջոցը կառավարութեան կողմից ամենքի՝ մահմեդականների եւ քրիստոնեաների համար բարեհաճ վերաբերմունքի ապահովումն է»: Ուստի, սուլթանի տիրոյթներում, նրա համոզմամբ, իշխանութիւնը հարկ է տրամադրել այնպիսի մի վարչակարգի, որը «հետեւողականօրէն իրականացուող սպանութեան, կողոպուտի, մոլեռանդ բարբարոսութեան կողմից սանձազերծուող զազրելի բռնութիւնների փոխարէն» ի վիճակի լինի արդարադատութեան եւ իրաւունքի հովանու ներքոյ խաղաղութիւն հաստատել[23]: Ստեղծուած անելանելի կացութիւնը շտկելու համար Կլեմանսոն պահանջում է ընտրել միակ հնարաւոր՝ կոտորածների կասեցման ուղին: Ճիշտ է, հարցի լուծման նախընտրած նրա սկզբնական տարբերակը, ինչպէս այդ ակնյայտ

դարձաւ շնորհիւ իրադարձութիւնների հետագայ ընթացքի տրամաբանութեան, ամենեւին իրատեսական չէր. «Բաւական կը լինի սուլթանին հասկացնել,– գրում է նա,– որ չկայ փրկութեան այլ միջոց, քան խաղաղ բարենորոգումները, անկողմնակալ ձեւով արդարութիւն եւ վերահսկողութիւն սահմանող կառավարութեան հաստատումը, որը կը յաջորդի ամենագարշելի քմահաճ իշխանութեանը եւ հաւասարապէս օգտակար կը լինի նրա բոլոր հպատակների համար»[24]: Հակառակ դէպքում, ինչպէս ենթադրում է Կլեմանսոն, կը ծագի տէրութիւնների զինուած ուժերի միջամտութեան անհրաժեշտութիւնը:

Հետագայ տարիներին, իրադարձութիւնների ծաւալումը Կլեմանսոյին աստիճանաբար յանգեցնում է հայերի ցեղասպանութիւնը միմիայն եւրոպական մեծ տէրութիւնների գործնական եւ համատեղ ջանքերի միջոցով կասեցնելու անհրաժեշտութեան գաղափարին: Նա բազմիցս անդրադառնում է այս հարցի կարեւորութեանը, խստագոյնս քննադատում թէ՛ Ֆրանսիայի, թէ՛ Բեռլինի պայմանագրի ներքոյ ստորագրած միւս տէրութիւնների կառավարութիւններին՝ ստանձնած պարտաւորութիւնները չկատարելու պատճառով: Տէրութիւնները «չեն հասել նոյնիսկ այն բանին, որ մեծ դահիճները պաշտօնանկ արուեն»,– մի առիթով գրում է նա[25]: 1904 թ. կոտորածները Կլեմանսոյին դրդում են «Կարմիր սուլթանի կողմից Հայաստանում կազմակերպուած՝ պարբերաբար տեղի ունեցող կոտորածներին վերջ տալու» նպատակով հանդէս գալ Ֆրանսիայի եւ նրա դաշնակից Ռուսաստանի միջեւ այդ խնդրին առնչուող համաձայնութիւն կայացնելու առաջարկութեամբ[26]:

Այս հարցն իր արտացոլումն է գտել նաեւ 1904 թ. յունիսի 29-ին Լոնդոնում գումարուած՝ վերը նշուած միջազգային կոնֆերանսին յղած Կլեմանսոյի նամակում, ուր վերստին մատնանշելով արեւմտահայութեան նկատմամբ իրագործուած վայրագութիւնները, որոնց նախադէպը, նրա իսկ խօսքերով, «հնարաւոր չի պատկերացնել բարբարոսութեան ամենամռայլ ժամանակներում», նա արդէն առաջադրում է Օսմանեան կայսրութեան ներքին գործերին միջամտելու անհրաժեշտութիւնը: «Այսօր յայտնի է,– գրում է նա,– որ անհնար է այնտեղ ունենալ վայրագութեան սանձազերծման կրկնութիւնն արգելակող որեւէ այլ երաշխիք, քան այնպիսի վարչակարգի հաստատումը, որը տէրութիւնների համաձայնութեան շնորհիւ վերջապէս կարգ ու կանոն եւ խաղաղութիւն պարտադրի եւ խարսխուի միայն բոլոր քաղաքացիների հանդէպ անկողմնակալ ձեւով արդարութիւն հաստատող հենքի վրայ: Հարկ է, որ տէրութիւնները միջամտեն (ընդգծումը մերն է – Վ. Պ.): Անհնար է ամօթալի անտարբերութեամբ շարունակ քաջալերել վերջին շնչում գտնուող ինքնակալութեան խելահեղ յանցագործներին»[27]:

Կլեմանսոն, ըստ նրա կենսագիրներից մէկի բնորոշման, «յանուն գաղափարի պայքարող մարտիկ է, այլ ոչ թէ պամֆլետագիր»[28]: Ուստի, ընձեռուած բարենպաստ առիթը նրա ուշադրութիւնից չի վրիպել այս հարցում Վատիկանի գրաւած անկարեկից դիրքորոշումը դատապարտելու համար: Այդ քայլն, անկասկած, պայմանաւորուած էր 80-90-ական թուականներին ռադիկալների կողմից կաթոլիկ եկեղեցու դէմ մղուող անզիջում պայքարով, որոնք ի շարս այլ խնդիրների, յամառօրէն առաջադրում էին եկեղեցին պետութիւնից անջատելու պահանջը[29], որն իրականութեան վերած-

© National Library of Armenia

ւեց միայն 1905 թ.: «Հռոմի եկեղեցին, որը մեծ ազդեցութիւն ունի միապետութիւնների եւ հանրապետութիւնների ժողովուրդների ու թագաւորների վրայ, արդեօ՞ք այս առթիւ այն ամէնն է արել, ինչ նրան թոյլատրում են անել գործելուն նպաստող՝ նրա ունեցած բացառիկ միջոցները: Դա այդպէս չի թւում»,– եզրակացնում է նա[30]: Ի դէպ, Հռոմի պապի հասցէին, որի կողմից «լսելի չէ բողոքի որեւէ խօսք, խղճմտանքի կոչ», քննադատական խօսքեր են հնչել նաեւ Կլեմանսոյի հետագայ ելոյթներից մէկում[31]:

Օսմանեան կայսրութիւնում հայերի եղեռնի կազմակերպիչներին անարգանքի սիւնին գամած ֆրանսիացի գործիչների թւում Կլեմանսոն առաջիններից էր, որը ոչ միայն բողոքի իր խրոխտ ձայնն է վեր հանել եւ մինչ այդ՝ արեւմտահայերի կոտորածներին գրեթէ անտեղեակ ֆրանսիական ու եւրոպական հասարակայնութեանը ներկայացրել Արեւմտեան Հայաստանում տեղի ունեցող անցքերի հաւաստի պատկերը[32], այլեւ, ի տարբերութիւն այլոց, հայերի ցեղասպանութեան հարցում դրսեւորած անվշտակից վերաբերմունքի համար դատապարտել է Ֆրանսիայի պետական քաղաքականութիւնը:

Բազում տարիներ անց, 1905-1907 եւ 1917 թթ. ռուսական յեղափոխութիւնների ազդեցութեան ներքոյ, Կլեմանսոյի հայացքներն էւոլիւցիա կ՚ապրեն, նա շեշտակի շրջադարձ կը կատարի ձախից աջ՝ մէկընդմիշտ լքելով արմատական դեմոկրատի դիրքերը: Անփոխոխ չի մնայ նաեւ նրա դիրքորոշումը Հայկական հարցում: Սակայն դա դեռ առջեւում է, իսկ խնդրոյ առարկայ ժամանակաշրջանում նա հանդէս է գալիս դեռեւս իբրեւ Հայ դատի ջերմեռանդ պաշտպան: Ուստի, մեր համաձայնութիւնն ենք յայտնում Գ. Նգրուրեանի հետ, որն այս առթիւ գրել է. «Իր մահից 45 տարի յետոյ Քլեմանսոն միշտ մնում է «Օրորի» եւ «Պրո Արմենիայի» այն պայծառ դէմքը, որ մեր պատմութեան ամենից դժնդակ ժամանակաշրջանին, իր հուժկու ձայնը բարձրացրեց ի խնդիր մեր բազմաչարչար ժողովրդի արդար իրաւունքների»[33]:

Հարկադրուած ենք միայն ցաւով նշել, որ Կլեմանսոյի քաղաքական գործունէութեանն առնչուող այս դրուագները յանիրաւի չեն արժանացել նրա կենսագիրներից շատերի ուշադրութեանը[34]:

Համիդեան կոտորածները դատապարտած ֆրանսիացի հանրայայտ քաղաքական գործիչների թւում է նաեւ գրող, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1911 թ.) Դենի Կոշենը (1851-1922), որի հետաքրքրութիւնը Հայկական հարցի նկատմամբ ծագել է վերը յիշատակուած «Հայաստանի կոտորածները» ժողովածոյում ամփոփուած փաստաթղթերին ծանօթանալուց յետոյ[35]: Մեծ թուով գրքերի հեղինակ Կոշենի գրական ժառանգութիւնից մեզ հետաքրքրում է 1899 թ. Փարիզում լոյս ընծայուած «Բարբարոսների դէմ» խորագիրը կրող ժողովածուն[36], որն ամփոփում է քրիստոնեայ ժողովուրդների նկատմամբ թուրքերի գործած ոճրագործութիւններին եւ գաղութային քաղաքականութեան հարցերին նուիրուած՝ 1896-1899 թթ. Ազգային ժողովում նրա ունեցած մերկացուցիչ ելոյթները: 1896 թ. նոյեմբերի 3-ի եւ 1897 թ. ապրիլի 3-ի ելոյթներն ուղղակիօրէն առնչւում են արեւմտահայերի կոտորածներին, եւս մէկը՝ 1897 թ. փետրուարի 12-ի ելոյթը՝ արեւելեան երկրներում տեղի ունեցած իրադարձութիւններին, այդ թւում հայերի ցեղասպանութեանը:

1896 թ. նոյեմբերի 3-ին, Ազգային

ժողովի նիստում, ուր առաջին անգամ քննարկւում էր Հայկական հարցը[37], Կոշենը հանդէս է գալիս ծաւալուն զեկուցմամբ: Նա թէեւ չի ժխտում վաղուց ի վեր հայ ժողովրդի գլխին դամոկլեան սրի նման կախուած վտանգի առկայութիւնը, ցնցուած, այնուամենայնիւ, հայկական կոտորածների ծաւալից ու չափերից՝ յայտարարում է. «Փոքր Ասիայում հէնց նոր տեղի ունեցած իրադարձութիւնները երեւակայութիւնից վեր են եւ հասել են այնպիսի սարսափելի աստիճանի, որ մենք իրաւունք չունենք ասելու, թէ դրանք կանխատեսելի են եղել»[38]:

Հետադարձ հայեացք նետելով դարեր ի վեր հայ ժողովրդին վիճակուած արհաւիրքների վրայ, Կոշենն արեւմտահայերի ցեղասպանութեան կազմակերպիչներին եւ կատարածուներին ոչնչով չի զանազանում «հին բարբարոսներից»: 1895 թուականն անուանելով «տխուր եւ միաժամանակ ամենանողկալի, ամենաարտառոց տարի», նա թուրքերի ոճրագործութիւնները համեմատում է այնպիսի ասպատակիչների ամենադժնի արարքների հետ, ինչպիսիք են Լենկ Թեմուրն ու շահ Աբբասը[39]:

Ցենուելով Ֆրանսիայի Արտաքին գործերի նախարարութեան արխիւի փաստաթղթերն ամփոփող՝ Հայկական հարցին ու հայերի ցեղասպանութեանը նուիրուած «Դեղին գրքի» վրայ, Կոշենը մանրամասնօրէն յիշատակում է 1894 թ. Սասունում թուրքերի գործած վայրագութիւնների մասին: Առճակատման պատճառ համարելով արեւմտահայերի անհանդուրժելի վիճակը, նա ուշադրութիւնն այդուհանդերձ հրաւիրում է աւելի կարեւոր՝ պետական պաշտօնեայի հրամանատարութեամբ գործող զինուած ուժերի միջամտութեան հանգամանքի վրայ, «որոնք խաղաղութիւնը վերականգնելու պատրուակի ներքոյ սպանում էին եւ կողոպտում»: Ի վերջոյ, «Սասունում հաստատուել է կարգ ու կանոն, բայց այդ կարգ ու կանոնն այնտեղ հաստատուել է, որովհետեւ այնտեղ այլեւս գոյութիւն չունի ո՛չ մի կանգուն տուն, որովհետեւ ո՛չ մի բնակիչ այլեւս կենդանի չէ»,– եզրակացնում է նա[40]:

Կոշենը ներկայացնում է Կոստանդնուպոլսում եւ Արեւմտեան Հայաստանի տարբեր քաղաքներում տեղի ունեցած կոտորածների ահարկու տեսարանները, չի վարանում ընդգծել, որ մարդկանց յիշողութեան մէջ դրանք վերակենդանացնում են վաղեմի ժամանակների, բարբարոսական երկրների պատմութեան, առնչուող եղելութիւնները: 1896 թ. Տրապիզոնի «նշանաւոր եւ սոսկալի» սպանդը, ըստ նրա, «սարսափելիութեան առումով գերազանցել է միւս բոլորին»: Ընդհանուր առմամբ, ինչպէս նա բազմիցս նշում է, Օսմանեան կայսրութիւնում մոլեգնում է «ահաբեկչութիւն եւ յանցագործութիւն սփռող սարսափելի վարչակարգ», «կանխամտածուած ձեւով կեանքի կոչուած զազրելի համակարգ»[41]:

Հայկական կոտորածները Կոշենը փաստօրէն դիտում է իբրեւ օսմանեան կառավարութեան կողմից հայերի նկատմամբ վաղուց ի վեր կիրառուող քաղաքականութեան տրամաբանական շարունակութիւն: Նրա տեսադաշտից չեն վրիպել թուրքական կառավարութեան կողմից հայկական դպրոցների փակման, եկեղեցիների գործունէութեան արգելման, հայերի նկատմամբ կիրառուող հալածանքների, նրանց ունեցուածքի կողոպուտի, նրանցից գանձուող՝ զարհուրելի չափերի հասնող հարկերի իրողութիւնները, որոնցով եւ պայմանաւորում է հայերի ըմբոստութիւնը:

© National Library of Armenia

Առանձնայատուկ կարեւորութիւն տալով այս հարցին, Կոշենը հանգամանօրէն քննարկում է 1895 թ. սեպտեմբերի 30-ին Կոստանդնուպոլսում հայերի կազմակերպած ցոյցը եւ նրանց կողմից սուլթանին յղուած հանրագրի պահանջները, որը բնութագրում է իբրեւ հնչակեան կուսակցութեան դրոշմը կրող՝ «յեղափոխական բնոյթի փաստաթուղթ»: Հաշուի առնելով օսմանեան պետութեան ղեկավարների կողմից շահարկուող այս հարցի ամբողջ կարեւորութիւնը, Կոշենը դեպուտատների պալատի նիստում հրապարակում է փաստաթղթի բնագիրը, այն ենթարկում մանրակրկիտ վերլուծութեան եւ հաւաստում, որ հանրագիրը ոչ միայն «խելայեղ յեղափոխականների» մտքի արգասիքը չէ, այլեւ չի պարունակում որեւէ չափազանցութիւն: «Ես մեծ կարեւորութիւն եմ տալիս ձեզ դրան իրազեկ դարձնելու հարցին,– դիմում է նա պատգամաւորներին,– որովհետեւ թէ՛ հայերի դէմ ուղղուած, թէ՛ թուրքական իշխանութեանը պաշտպանելու համար օգտագործուող հզօր փաստարկը յանգում է հետեւեալին. բոլոր երկրներում կան յեղափոխականներ, նիհիլիստներ, անարխիստներ. նիհիլիստներ՝ որոնց թուրքական իշխանութիւնը հարկադրուած է եղել ամենախիստ ձեւով պատժելու»[42]:

Լինելով չափաւոր հայեացքների տէր քաղաքական գործիչ, պառլամենտական նիստերի դահլիճում տեղ զբաղեցնելով աջ պատգամաւորների կողքին, Կոշենն ազնուօրէն յայտարարում է յեղափոխականների հանդէպ ունեցած իր անհամակրալից վերաբերմունքի մասին, սակայն «կառավարութիւնները,– շարունակում է նա,– հնձում են այն, ինչ ցանում են, եւ եթէ նրանք ձգտում են խաղաղութեան՝ վստահութիւն շահելու եւ ազատութիւն ընձեռելու միջոցով պարտաւոր են քաղաքացիների խաղաղութիւնն ապահովելու ցանկութիւն դրսեւորել: Ես կարծում եմ, որ երբ նրանք, դրա փոխարէն, ի վիճակի են միայն աւերածութիւն սփռող ահաբեկչական իշխանութիւն հաստատել, ապա չպէտք է տեւական հնազանդութիւն ակնկալեն»[43]: Կասկած իսկ չտածելով, որ հայ ժողովուրդը փոքր իսկ պատասխանատուութիւն չի կրում ստեղծուած իրավիճակի համար, Կոշենը «յանցագործներ» է անուանում «նրանց, ովքեր յղացել են անհանգստութիւններ պատճառող ազգութեանը բնաջնջելու հրեշաւոր գաղափարը (ընդգծումը մերն է – Վ. Պ.), նրանց, ովքեր ազատութիւններ տալով կրքերին՝ զէնքի են դիմել»[44]:

Ի վերջոյ, հայերի ցեղասպանութիւնը Կոշենն ուղղակիօրէն պատճառաբանում «Հայկական հարցին՝ հայերին ոչնչացնելու միջոցով լուծում տալու (ընդգծումը մերն է – Վ. Պ.) սուլթանի դիտաւորութեամբ, որը նա սկսել է իրագործել»[45] եւ այն պայմանաւորում Օսմանեան կայսրութեան ղեկավարների կողմից պետական մակարդակով իրականացուող քաղաքականութեամբ: Խօսելով, օրինակ, Ուրֆայի կոտորածների մասին, նա առանց այլեւայլութեան ընդգծում է, որ ամէն ինչ կատարւում էր «իշխանութիւնների հրահրմամբ եւ օսմանեան կառավարութեան նողկալի մեղսակցութեամբ»: Մէկ այլ առիթով, տալով ջարդերի ընդհանուր գնահատականը՝ նա նշում է. «այսպիսիք են այն արարքները, որոնք իրագործուել են թուրքական իշխանութեան աչքի առջեւ, նրա մեղսակցութեամբ եւ օգնութեամբ»[46]:

Կոշենը քննադատական խօսքեր է ուղղում եւրոպական պետութիւնների ղեկավարների հասցէին՝ արեւմտահայութեանն օժանդակութիւն չցուցաբերելու պատճառով, հաւաստում, որ եւրոպական

ժողովուրդները քսան տարուց ի վեր ոչինչ չեն արել հայերի տառապանքներն ամոքելու, նրանց իրենց հովանու ներքոյ վերցնելու համար, իսկ «քաղաքակիրթ տէրութիւնների բարեհաճ թողտուութիւնը» ճանապարհ է հարթել բարբարոսական յանցագործութիւնների իրագործման համար: Փակուղուց ելնելու նպատակով՝ նա առաջարկում է «պաշտպանել ոչ թէ միայն մէկ ազգութեան եւ կամ միայն նրա համար երաշխիքներ ու արտոնութիւններ պահանջել», այլ ոտքի հանել Օսմանեան կայսրութիւնում ապրող բոլոր դժբախտ հպատակներին ու բարենորոգել ամբողջ երկիրը[47]:

Համիդեան կոտորածների դատապարտման գործում անկասկած անուրանալի է Ֆրանսիացի սոցիալիստների, մասնաւորապէս Ժան Ժորեսի եւ Ֆրանսիս դը Պրեսանսէի ներդրումը: XIX դարի վերջերին Ֆրանսիայի քաղաքական երկնակամարում փայլատակում էր սոցիալիստական եւ միջազգային բանուորական շարժման ականաւոր գործիչ, բոցաշունչ հռետոր Ժան Ժորեսի (1859-1914) անունը: Անշուշտ, նրա՝ իբրեւ 1905 թ. ի վեր Ֆրանսիական սոցիալիստական միասնական կուսակցութեան ղեկավարի, «Ցումանիտէ» սոցիալիստական լրագրի հիմնադրի (1904) քաղաքական գործունէութեան հիմնական դրուագները դեռ առջեւում էին: Այդուհանդերձ, 1885-1889, 1893-1898 թթ. արդէն, լինելով Ազգային ժողովի պատգամաւոր, Ժորեսը ծաւալել էր բեղուն քաղաքական գործունէութիւն, որն ընդգրկում էր լայնահուն շառաւիղներ: Այս առթիւ նրա հակիրճ, սակայն դիպուկ գնահատականը տուել է ֆրանսիական սոցիալիստական շարժման պատմութեան խոշոր գիտակ Ժան Բրյուան. «Չէ՞ որ Ժորեսն առաջին հերթին գործունեայ մարդ էր կամ աւելի ստոյգ՝ բարձրաշնորհ քարոզիչ, մարդ, որը պայքարում էր օրըստօրէ, հռետոր, լրագրող, որը որեւէ լուր ստանալուց անմիջապէս յետոյ պէտք է ելոյթ ունենար, չնայած այն բանին, որ նրան, բնականաբար, դեռ յայտնի չէին այս կամ այն իրադարձութեան բոլոր կողմերը, որոնց առթիւ հարկ էր գրաւել որոշակի դիրքորոշում»[48]:

Ցիրաւի, առաջին իսկ հպանցիկ ծանօթութիւնը Ժորեսի՝ 1896-1897 թթ. ելոյթների հետ մեզ յանգեցնում է այն համոզման, որ Եւրոպայում տեղի ունեցող եւ ոչ մի նշանակալից՝ այդ թւում եւրոպական պետութիւնների գաղութատիրական քաղաքականութեանն առնչուող իրադարձութիւն, չի վրիպել նրա աչալուրջ հայեացքից: Ժորեսը, որն այս ժամանակաշրջանում արդէն հետեւողականօրէն դատապարտում էր գաղութատիրութեան կործանարար հետեւանքները, չէր կարող բնականաբար շրջանցել այնպիսի մի արտառոց եւ աննախադէպ եղելութիւն, ինչպիսին էր հայերի ցեղասպանութիւնը, որին նուիրուած նրա ելոյթներն, անկասկած, նրա քաղաքական գործունէութեան անքակտելի մասն են կազմում: Ուստի, պատահական չէ, որ ի շարս՝ մեծ հռետորի անողոք քննադատութեանը ենթարկուած՝ եւրոպական տերութիւնների գաղութատիրական քաղաքականութեանն առնչուող հիմնահարցերի, խորհրդային ականաւոր պատմաբան Ալբերտ Մանֆրեդը յիշատակել է նաեւ հայերի ցեղասպանութեան խարազանման իրողութիւնը, մասնաւորապէս ընդգծելով, որ Ժորեսը «զայրոյթով էր նշաւակում հայերի կոտորածներն ու բնաջնջումը թուրքական սուլթան Աբդուլ Համիդի կողմից»[49]:

Ժորեսի դիրքորոշման պարզաբանման համար խիստ յատկանշական է մեծ

© National Library of Armenia

աղմուկ յարուցած «Հայերի կոտորածները» թեմայով ելոյթը, որով 1896 թ. նոյեմբերի 3-ին նա հանդէս է եկել Ազգային ժողովում: Ժորեսը, որին այդ քննարկմանը մասնակցելու խնդրանքով դիմել էր Սապահ-Գիւլեանը, տալով իր համաձայնութիւնը՝ խնդրել էր վերջինիս իրեն տրամադրել հայ ժողովրդի անցեալին վերաբերող տեղեկութիւններ եւ նրա աջակցութեամբ ծանօթացել անհրաժեշտ գրականութեան, այդ թւում Վ. Լանգլուայի աշխատասիրութեամբ լոյս ընծայուած՝ հայ պատմիչների (Խորենացու, Եղիշէի եւ այլոց) գործերի թարգմանութիւններն ամփոփող ժողովածուին[50]:

Իր ելոյթում նկարագրելով հայկական վեց վիլայեթներում տեղի ունեցող ջարդերը, որոնք, ըստ նրա, հազիւ թէ կարող էին նախադէպ ունենալ, Ժորեսը յայտարարել է. «Այլեւս փոքր խմբերով չէ, որ կոտորում էին, այլ քաղաքներում՝ մէկ օրում 3.000 եւ 4.000 զոհերից բաղկացած ստուար զանգուածներով՝ շեփորի հնչիւնների ներքոյ, դատավճռի իրականացման կանոնաւորութեամբ»[51]: «Ամենանողկալի կոտորածների»[52] մանրամասները նրան յանկարծակիի են բերել, եւ այդ վայրագութիւններից ապշահար՝ Ժորեսը յայտարարել է. «Ինձ թուացել է, թէ այդ հեռաւոր եւ դժնդակ արեւելեան երկնակամարում յառնել են Երեսնամեայ պատերազմի բոլոր սարսափները»: Այդուհանդերձ, նրա խորազնին հայեացքն անմիջապէս թափանցել է արիւնալի իրադարձութիւնների բուն էութեան մէջ: «Կարեւորը, նշանակալիցը՝ մարդկային վայրագութեան սանձազերծումը, նրա վերակենդանացումը չէ այնտեղ: Կարեւորը հէնց այն է, որ այն հրահրուել է, քաջալերուել գործող օրէնքները յարգող կառավարութեան կողմից, այլ ոչ թէ զարթօնք ապրել տարերայնօրէն»: Ուստի, ջարդերի ողջ պատասխանատուութիւնը նա բարդում է Աբդուլ Համիդի վրայ, որը «կազմակերպել է, ղեկավարել կոտորածները»[53]:

Զբաւարարուելով այս փաստի արձանագրմամբ, Ժորեսը մեծ հմտութեամբ եւ խորաթափանցութեամբ ի յայտ է բերել Աբդուլ Համիդի հայատեաց քաղաքականութեան ակունքները: Համաձայն նրա մեկնաբանութեան՝ բալկանեան որոշ երկրների կողմից օսմանեան լծի թօթափումից երկիւղած սուլթանը մեծ մտավախութիւն է դրսեւորել հայերի կողմից առաջադրուող պահանջների նկատմամբ եւ ի վիճակի չլինելով բարենորոգումների միջոցով արդարացի վարչակարգ հաստատել, գերադասել է դիմել հարցի լուծման ուժային տարբերակին: «Նա կարծել է, պարոնայք, եւ կարծել է իրաւամբ,– յայտարարել է Ժորեսը,– որ այս ծրագիրն աւարտին հասցնելու համար հարկ է, որ ինքը Եւրոպային կատարուած փաստի, իրագործուած կոտորածի առջեւ կանգնեցնի: Նա տեսել է, թէ ինչպէս է Եւրոպան վարանում, որքան է նա անվճռական, տարաձայնութիւններով բզկտուած եւ մինչ սպանդի եռուն շրջանում՝ յիրաւի տարանջատուած ու անզօր դեսպանները նրան ճանձրացնում էին մարդասիրութեանը եւ բարենորոգումներին վերաբերող ծիծաղելի խօսակցութիւններով, նա դաշոյնի միջոցով աւարտին էր հասցնում բնաջնջումը՝ ձերբազատուելու համար Հայկական հարցից (ընդգծումը մերն է – Վ. Պ.)»[54]: Ակնյայտ է, որ նա, ինչպէս եւ Կոշենը, այն եզակի գործիչներից է, որն ամբողջ խորութեամբ ըմբռնել է արեւմտահայութեան ողբերգութեան գլխաւոր պատճառը, այն է՝ Հայկական հարցը՝ հայերին ոչնչացնելու միջոցով լուծելու Աբդուլ Համիդի նախընտրած միակ հնարաւոր եղանակի բուն էութիւնը:

Աբդուլ Համիդի որդեգրած քաղաքականութիւնն, ի վերջոյ, ինչպէս 1896 թ. նոյեմբերի 11-ին «Դեպեշ դը Տուլուզ» լրագրում լոյս ընծայած «Նոր փաստ» յօդուածում հաւաստել է Ժորեսը, յանգեցրել է այն բանին, որ «երկու տարուց ի վեր աւելի քան հարիւր հազար մարդկային էակներ են կոտորուել, բռնութիւնների ենթարկուել, խոշտանգուել»[55]: Ելնելով իրականութեան անսքող պատկերից, նա եզրակացրել է. «Հայաստանը գտնուում է վայրագութիւններ իրագործող վարչակարգի ներքոյ, որոնց հետ, յայտնի չէ, թէ արդեօ՞ք համեմատելի են մոնղոլների ասիական բռնութիւնները»[56]:

Ընդհանուր առմամբ, Ժորեսի՝ հայկական կոտորածները շօշափող բոլոր ելոյթներին բնորոշ է ոչ թէ փաստերի խճողումը կամ սոսկ թուարկումը, այլ պատշաճ մակարդակով իրադարձութիւնների հանդէպ ի յայտ բերած վերլուծական մօտեցումը[57]: Ինչ վերաբերում է նրա կողմից քննարկուած յարակից հարցերին, ապա առաջին հերթին աչքի է զարնում արեւմտահայութեան նկատմամբ եւրոպական տէրութիւնների եւ մասնաւորապէս Ֆրանսիայի ղեկավար շրջանների դրսեւորած անկարեկից վերաբերմունքի անողոք քննադատութիւնը: Ընդդիմութեան մէջ գտնուող սոցիալիստը չէր կարող, բնականաբար, լռութեամբ շրջանցել՝ արեւմտահայերի ճակատագրում փաստօրէն կործանարար նշանակութիւն ունեցած այս էական հանգամանքը, որը, յիրաւի, նրա այն բոլոր ելոյթների առանցքային դրոյթներից է, որոնցում, գուցէեւ հարեւանցիօրէն, քննարկել է հայերի ցեղասպանութիւնը[58]:

Նոյեմբերի 3-ի ելոյթում, հայկական կոտորածների առիթով, բանավիճելով Արտաքին գործերի նախարար Թրքամէտ Գաբրիէլ Հանոտոյի հետ, Ժորեսը վերջինիս ուշադրութիւնը հրաւիրել է ոչ միայն սուլթանի, այլեւ Եւրոպայի կրած պատասխանատուութեան վրայ: Քանի որ մեծ տէրութիւնները չեն կատարել Բեռլինի վեհաժողովի կողմից ընդունուած պայմանագրով ստանձնած իրենց պարտականութիւնները, նա արեւմտահայերին համարել է «եւրոպական բանսարկութեան զոհեր»[59]: Դեռ աւելին, Ֆրանսիական կառավարութեանը, որը չի կամեցել բողոքի որեւէ խօսք ուղղել ջարդարարների հասցէին, նա բնորոշել է իբրեւ «լիակատար բնաջնջման» «մեղսակից»: Թէպէտ Ժորեսի այս յայտարարութիւնն առաջ է բերել նիստի նախագահի ընդվզումը, որը նրանից պահանջել է հրաժարուել այդ բառից, քանզի, համաձայն նրա համոզման՝ հայերի կոտորածների հարցում Ֆրանսիական կառավարութիւնը որեւէ մեղսակցութիւն չի ունեցել, աննկուն հռետորն այնուամենայնիւ մնացել է անյողդողդ. «Եթէ ես կարողանայի, պարոնայք,– դիմել է նա պատգամաւորներին,– ակնթարթօրէն վերացնել վերջին երեք տարիների պատմութեան ընթացքում մեր բոլորի վրայ բարդուող պատասխանատուութիւնները, որքան դիւրին կը լինէր ինձ համար հրաժարուել իմ միտքն արտայայտող այդ բառից, մի բան, որը շատ վաղուց արած կը լինէի»[60]:

Մեծ տէրութիւններին բնորոշ անվճռական վարքագիծը Ժորեսը, վերջին հաշուով, պատճառաբանել է նրանց միջեւ առկայ տարաձայնութիւններով, նրանց յատուկ «նկրտումներով, նախանձով, ամօթալի եսասիրութեամբ», որոնց հետեւանքով նրանք «թոյլատրել են կոտորել մի ամբողջ ժողովրդի»[61]:

Ժորեսի կողմից մանրամասն քննութեան է ենթարկուել ոչ միայն Ֆրանսիայի, այլեւ նրա դաշնակից Ռուսաստանի՝ Հայկական հարցում գրաւած պարսաւելի

© National Library of Armenia

դիրքորոշումը: Նա ցարիզմին մեղադրել է Հայաստանն էլ աւելի թուլացնելու դիտաւորութեամբ՝ տեղի ունեցող եղեռնական անցքերին միջամտելուց գիտակցաբար ձեռնպահ մնալու մէջ, որը կարող էր նրան հնարաւորութիւն ընձեռել հետագայում շատ աւելի դիւրին ձեւով իր տիրապետութիւնն այդ երկրում հաստատելու, իսկ Ֆրանսիային՝ իր դաշնակից Ռուսաստանին սիրաշահելու մտադրութիւնից ելնելով՝ «Դեղին գրքի» հրատարակութիւնը հետաձգելու մէջ[62]: «Երեք տարուց ի վեր,– յայտարարել է նա,– Ֆրանսիական կառավարութիւնն արեւելեան գործերի շուրջ լռութիւն է պահպանում: Նա անյողդողդ է մնացել հայ ժողովրդի կոտորածի, սպանդի, նրա հանդէպ կիրառուող բռնութեանն ի տես, ժողովուրդ, որը նախկինում մեր երկրի մասին հաւատով ու յարգանքով էր խօսում»[63]: Ժորեսի խիստ քննադատութեանն է ենթարկուել նաեւ Ֆրանսիական մամուլի կողմից պահպանուող «կատարեալ լռութիւնը», որի «մի մասին,– ինչպէս նա նշում է,– ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն, լռակեցութեան համար վճարել են»[64]:

Արեւմտահայութեան ճակատագրի հանդէպ ի յայտ բերած անտարբերութեան համար պախարակելով Երրորդ հանրապետութեան ղեկավարներին, Ժորեսը յայտարարել է. «Այդ դուք էք, որ տարիների ընթացքում առնուազն անտարբերութեամբ ու թուլամտօրէն դարձել էք խառնակութեան եւ անկարգութիւնների բոլոր պատճառների խորացման դիտորդը, այդ դուք էք, որ ժամանակին հայերի համար փութաջանօրէն բարենորոգումներ չէք պահանջել, այդ դուք էք, որ թոյլատրել էք ոչնչացնել այս ժողովրդին»[65]: Մէկ այլ առիթով, այս փաստերի հիման վրայ, Ժորեսն Աբդուլ Համիդին անուանել է Ֆրանսիական կառավարութեան եւ Արտաքին գործերի նախարարութեան ղեկավարների «բարեկամ»[66]: Ի վերջոյ, նա իր համոզմունքն է յայտնել առ այն, որ «Եւրոպայի մեղսակցութիւնը» մեծապէս քաջալերել է սուլթանին[67]:

Ժորեսն անդրադարձել է նաեւ մեծ աղմուկ պատճառած՝ Օսմանեան կայսրութեան մասնատման խնդրին, որի ծագումը պայմանաւորել է «պարզապէս այն փաստով, որ սուլթանի իշխանութեան ներքոյ համախմբուած տարբեր ժողովուրդներն այնտեղ (կայսրութիւնում – Վ. Պ.) անհրաժեշտ երաշխիքներ չեն ունեցել: Արեւելեան հարցը կրկին կեանքի է կոչուել, որովհետեւ հայ ժողովուրդը կոտորուել է»,– հաւաստել է նա: Սակայն, ի վերջոյ, Ժորեսը, ինչպէս նաեւ արեւմտահայութեանը սատարած ժամանակի գրեթէ բոլոր ֆրանսիացի գործիչները, սահմանափակուել է սոսկ իր լիակատար համաձայնութիւնը յայտնելով Հանոտոյի՝ օսմանեան հարցի վերջնական կարգաւորմանը վերաբերող այն առաջարկութեան հետ, ըստ որի, սուլթանը պարտաւոր է ընդունել կայսրութեան բոլոր ժողովուրդների համար նախապատրաստուած բարենորոգումների ծրագիրը, քանզի հակառակ դէպքում կը ծագի «դրանք նրան պարտադրելու» միջամտութեան անհրաժեշտութիւնը: Ժորեսն իր կողմից սոսկ կսկիծ է յայտնել, որ նման քաղաքականութիւնը որդեգրուել է «շատ մեծ ուշացումով»[68]:

Հայ դատին սատարած ֆրանսիացի քաղաքական գործիչների թւում է հայերի եղեռնի դատապարտման հարցում մեծ հետեւողականութիւն եւ կրքոտութիւն ցուցաբերած՝ Մարդու իրաւունքների լիգայի նախագահ, Ազգային ժողովի պատգամաւոր Ֆրանսիս դը Պրեսանսէն (1853-1914), որը Հայկական հարցով սկսել է

հետաքրքրուել աւելի վաղ, քան շատ ուրիշներ: Տարբեր ատեաններում ցեղասպանութեան նշաւակմամբ բազմիցս հանդէս եկած Պրեսանսէի առաջին յօդուածը, որը նախորդել է փաստաթղթերի տարբեր ժողովածուների, այդ թւում՝ «Դեղին գրքի» լոյս ընծայմանը, նրա հետագայ ելոյթներից զանազանւում է իրադարձութիւններին տրուած մեկնաբանութիւնների հարցում հեղինակի դրսեւորած չափաւոր մօտեցմամբ, որն անկասկած պայմանաւորուած է եղել կոտորածներին վերաբերող անհրաժեշտ տեղեկատւութեան բացակայութեամբ, նրա անբաւարար իրազեկութեամբ[69]:

Պրեսանսէն, անշուշտ, համառօտակի անդրադարձել է Համիդեան ջարդերի ամենացցուն դրուագներին, ընդհանուր գծերով ներկայացրել 1894 թ. Սասունի «վայրագ» կոտորածը, որը տեղի էր ունենում «գերագոյն իշխանութիւնների հրամանով եւ նրանց աչքի առջեւ»: Հաւանաբար որեւէ յստակ պատկերացում չունենալով տակաւին «գերագոյն իշխանութիւններ» հասկացողութեան մասին, նա շարունակել է. «Ասուել է, որ վերից հրահանգ է տրուել այս տարածաշրջանների հայերին բնաջնջելու մասին: Անկախ այն բանից, թէ որ կողմ է շրջւում հայեացքը, ի յայտ են գալիս միայն դահիճներ՝ բայց ոչ հովանաւորներ կամ դատաւորներ»[70]:

Միեւնոյն զուսպ վերաբերմունքն է դրսեւորւում նրա կողմից 1895 թ. Կոստանդնուպոլսում հայերի կոտորածների գնահատման հարցում. «Շատ հաւանական է, որ իշխանութիւնները փակել են աչքերը, եթէ չասենք, որ շարժման գլուխ են անցել: Արդեո՞ք հարկ է հաւատ ընծայել բարբարոսական մաքիաւելիականութեան կողմից ոգեշնչուելու հանգամանքին եւ Ելդըզ-Քեոշքից տրուած նշանաբանին: Հայերն այդ են պնդում, բայց անհերքելի փաստերը չեն բաւականացնում»: Այսպէս, անհրաժեշտ սկզբնաղբիւրների սակաւութեան պատճառով Պրեսանսէն սահմանափակուել է ընդհանուր բնոյթի դիտողութիւններով, որոնք, հարկաւ, բաւական հեռու են քննարկուող հարցերին սպառիչ մեկնաբանութիւններ տալուց: Այդուհանդերձ, նա չի վարանել մատնացոյց անելու ծայր առած վայրագութիւնների սանձահարման հարցում օսմանեան կառավարութեան կողմից՝ իր կարծիքով դրսեւորուած անզօրութիւնը[71]:

Յաջորդ տարիներին աճել է Պրեսանսէի հետաքրքրութիւնը հայերի եւ քրիստոնեայ այլ ժողովուրդների հանդէպ օսմանեան կառավարութեան կողմից կիրառուող բնաջինջ քաղաքականութեան նկատմամբ: Ծանօթութիւնը զանազան փաստաթղթերի ժողովածուներում հրապարակուած վաւերագրերի հետ նպաստել է նրա մօտ կոտորածների ծաւալի, ընթացքի եւ դրանց կազմակերպիչների մասին ամբողջական պատկերացման ձեւաւորմանը: Այդ մասին է վկայում ցեղասպանութեան մեկնաբանման հարցում նրա դիրքորոշման կրած էական փոփոխութիւնը: Թէ՛ ֆրանսիական խորհրդարանում, թէ՛ այլ միջավայրերում բազմիցս մասնակցելով Համիդեան կոտորածների շուրջ ծայր առած քննարկումներին եւ հանդէս գալով մերկացուցիչ ծաւալուն ելոյթներով, XX դարասկզբին նա ներկայանում է արդէն իբրեւ թուրք ջարդարարների եւ առաջին հերթին Աբդուլ Համիդի հետեւողական դատափետող:

1903-1904 թթ. Պրեսանսէն պարբերաբար լուսաբանում է հայկական կոտորածները, դրանք որակում իբրեւ Հայաստանում «ահռելի մասշտաբներով» տեղի ունեցած «զարհուրելի ողբերգութիւն»[72]: Դեպուտատների պալատում ունեցած զա-

© National Library of Armenia

նազան ելոյթներում նա մանրազննին քննարկում է 1894-1896 թթ. Սասունի եւ Մուշի ջարդերը, հայերի անհնազանդութիւնը մեկնաբանում նրանով, որ ոչ միայն վերջիններիս՝ Բարձր Դռան հովանաւորութիւնը հայցող դիմումներն են մնացել անարձագանք, այլեւ իշխանութիւնների ներկայացուցիչներն են եռանդագին ջանքեր գործադրել նրանց ունեցուածքը կողոպտելու հարցում: Դրան հետեւել է «մարդասպան զօրավար» Զեքի փաշայի գլխաւորութեամբ գործող զօրքերի միջամտութիւնը, որը յանգեցրել է «սարսափազդու ողբերգութեան ծաւալմանը»[73]:

Տալով 90-ական թթ. կոտորածների ընդհանուր գնահատականը, Պրեսանսէն, Փարիզում կայացած 1903 թ. փետրուարի 15-ի ելոյթում յայտարարում է. «Քաղաքակիրթ աշխարհին յատկապէս շանթահարում է հէնց այն, որ խօսքը ժողովրդի մոլեռանդութեան յանկարծահաս ժայթքումին չէ վերաբերում: Ո՛չ, դա կազմակերպուած բարբարոսութիւն էր, քանզի մեծ մարդասպանի դրոշմը կրող սուլթանի աչքի առջեւ կոտորածը սկսւում եւ աւարտւում էր ,ստոյգ ժամի, վերսկսւում՝ երբ դրան վերաբերող հրաման էր արձակւում՝ արիւնաներկ անելով մի ամբողջ երկրամաս՝ սկսած Վանայ լճի ափերից մինչեւ Կոստանդնուպոլիս»[74]:

1904 թ. հայերի ըմբոստութիւնը Սասունում Պրեսանսէն պայմանաւորում է ժողովրդի տառապալից վիճակով եւ այն վհատութեամբ, որի մէջ նրան ձգել էր «արեւմտեան դիւանագիտութիւնը», հանգամանք, որը սասունցիներին դրդել էր «անհրաժեշտ դիմադրութիւն» կազմակերպելու[75]: Յենուելով ֆրանսիացի դիւանագէտների գրագրութիւնների վրայ, նա եղեռնի ողջ պատասխանատուութիւնը բարդում է օսմանեան կառավարութեան եւ անձամբ Աբդուլ Համիդի վրայ, քանզի, ըստ նրա, գրեթէ մի ամբողջ ժողովրդի ոչնչացումը տեղի է ունեցել համաձայն վերջինիս հրահանգների[76], որին բնութագրում է «մեծ մարդասպան», «Հայաստանի դահիճ», «թագակիր դահիճ», «Ելդըզ Քեօշքի մենակեաց, որի ձեռքը կարմրագունել է արիւնից» պիտակներով[77]: Ինչպէս տեսնում ենք, 1900-ական թուականների սկզբներին արդէն, նա հայերի ցեղասպանութիւնը դիտում է իբրեւ պետական մակարդակով իրականացուող իրադարձութիւն, որը վկայում է նրա հայեացքների ակնյայտ էվոլիւցիայի մասին:

Ինչպէս եւ Ժորեսը, Պրեսանսէն կրքոտութեամբ է դատապարտում եւրոպական տէրութիւնների, այդ թւում Ֆրանսիայի ամօթաբեր վարքագիծը Հայկական հարցում, որը դարձել է «1896 թ. կոտորածների անգործունեայ, եթէ ոչ անյողդողդ ականատեսը»[78]: Ըստ նրա՝ 300.000 հայերի սպանդի պատասխանատուութիւնը միանշանակօրէն կրում է Եւրոպան[79]: Ինչ վերաբերում է ֆրանսիական կառավարութեան քաղաքականութեան քննադատութեանը, ապա Պրեսանսէն մեղադրում է մասնաւորապէս Հանոտոյին՝ «Դեղին գրքում» զետեղուած ամենակարեւոր փաստաթղթերի աղճատումը թոյլատրելու պատճառով, ինչը յանգեցրել է իրականութեան ամբողջական պատկերի խեղաթիւրմանը[80]: Պրեսանսէն շատ աւելի խստաշունչ է վերջինիս քաղաքականութեան ընդհանուր գնահատականի հարցում, քանզի նրա համոզմամբ Հանոտոն «խաբէութիւնը վերածել է մեղսակցութեան»[81]:

Հայկական հարցն անուանելով «սուրբ գործ»[82], Պրեսանսէն ջանքեր է գործադրում դրա լուծման լաւագոյն տարբերակը որոնելու ուղղութեամբ: Ինչպէս եւ Կլեմանսոն, նա եւրոպական մեծ տէրութիւնների միջամտութեան ջերմեռանդ կողմնակիցն է: Վկայակոչելով, օրինակ, 1904 թ. Սասունում 21 գիւղերի հրկիզման իրողութիւնը, նա այդ փաստն ինքնին բաւարար է համարում «արդարացնելու, պահանջելու համար Եւրոպայի եւ մասնաւորապէս Ֆրանսիայի հրատապ միջամտութիւնը»[83]: Նա իր համոզմունքն է յայտնում առ այն, որ «քաղաքակիրթ աշխարհը չի կարող երկու անգամ անընդմէջ սատարել անկանխատեսելի իրողութեանը եւ իր անգործունէութեամբ երկրորդ անգամ թոյլատրել այս դժբախտ ազգութեան լիակատար արիւնաքամութիւնը... Աւելի քան երբեւէ,– շարունակում է նա,– ես յամառօրէն հաւատում եմ, որ բոլոր նրանք, ովքեր ստորագրել են Բեռլինի պայմանագիրը եւ Դռան կոնցեսիաների պատճառով չեն կորցրել իրենց խիղճը, պէտք է Կոստանդնուպոլսում համատեղ քայլ ձեռնարկեն, որը բաւական կը լինի արիւնահեղութիւնը կասեցնելու համար»[84]:

Կասկածից վեր է, որ Ժորեսի եւ Պրեսանսէի բոցավառ ելոյթները նշանակալից երեւոյթներ էին ֆրանսիական քաղաքական դաշտում, որոնց ճառագայթները լոյս են սփռել այն քողի վրայ, որն Արեւմտեան Հայաստանում տեղի ունեցող իրադարձութիւնները, ֆրանսիական կառավարութեան թրքամէտ քաղաքականութեան հետեւանքով, անջրպետում էր հասարակութեան լայն խաւերից, առաւել եւս եթէ նկատի ունենանք, որ դրանց մի մասը հնչել է Ազգային ժողովի ամբիոնից:

Համիդեան կոտորածների անկողմնակալ մեկնաբանութեան գործում մեծ լումայ է ներդրել նաեւ յայտնի հրապարակախօս Վիկտոր Բերարը (1864-1931): Նրա հետաքրքրութիւնը Հայկական հարցի նկատմամբ ծագել է դեռեւս արիւնալի իրադարձութիւնների արշալոյսին, երբ, ըստ Սապահ-Գիւլեանի վկայութեան, ֆրանսիական «չափաւորական հանրապետականների մի մասը ծածուկ մի պատուիրակութիւն ուղարկեց Հայաստան գործերի դրութիւնն ուսումնասիրելու», որի կազմում ընդգրկուած էր նաեւ «պ. Վիկտոր Բերար համակրելի երիտասարդը»[85]:

Փարիզ վերադառնալուց յետոյ Բերարը զինուորագրուել է Հայ դատի պաշտպանութեան շնորհակալ գործին եւ այդուհետեւ պարբերաբար լուսաբանել Թուրքիայում տեղի ունեցող իրադարձութիւնները[86]: Հայկական կոտորածների թարմ տպաւորութեան ներքոյ նա առաջաբաններ է գրել Հայկական հարցի պատմութեանը նուիրուած այլեւայլ հրատարակութիւնների համար[87], «Ռեւյու դը Պարի» ամսագրում հանդէս եկել «Սուլթանի քաղաքականութիւնը» խորագիրը կրող յօդուածաշարով[88], որի ընդլայնուած տարբերակը 1897 թ. հրատարակել է առանձին գրքով[89]:

Բերարը յենւում է ոչ միայն իր անձնական տպաւորութիւնների եւ ականատեսների վկայութիւնների վրայ, այլեւ օգտագործում մատչելի սկզբնաղբիւրները, մասնաւորապէս Մեծ Բրիտանիայի Արտաքին գործերի նախարարութեան փաստաթղթերն ամփոփող «Կապոյտ գիրքը», որը նրան հնարաւորութիւն է ընձեռել անկողմնակալօրէն ներկայացնելու Օսմանեան կայսրութիւնում բնակուող քրիստոնեայ ժողովուրդների եւ առաջին հերթին հայերի վիճակն իր ողջ բազմերանգութեամբ, վերլուծելու արեւմտահայութեան հանդէպ Աբդուլ Համիդի կիրառած քաղաքականութեան ելեւէջները, ցեղասպանութեան դրդապատճառները: Մի կողմ թողնելով Բերարի կողմից քննարկուած՝ արեւմտահայութեան եղեռնին

© National Library of Armenia

առնչուող զանազան հարցերը (XIX դարի 60-ական թթ. արեւմտահայութեան քաղաքական զարթօնքը, հայ քաղաքական կուսակցութիւնների գործունէութիւնը, Անգլիայի քաղաքականութիւնը եւ այլն), մեր ուշադրութիւնը կենտրոնացնենք սոսկ այն խնդիրների վրայ, որոնք խիստ էական են ցեղասպանութեան մեկնաբանութեան ասպարէզում նրա գրաւած դիրքորոշումը լուսաբանելու համար:

Անդրադառնալով Փոքր Ասիայի տարբեր բնակավայրերում (Սասուն, Դիարբեքիր եւ այլն) 90-ական թուականներին տեղի ունեցած հայկական կոտորածներին, Բերարը պարբերաբար մատնանշել է ցեղասպանութեան՝ իբրեւ պետական քաղաքականութեան բնոյթը, որն իրականացւում էր օսմանեան իշխանութիւնների ղեկավարութեամբ[90], բազմիցս վկայակոչել կայսրութեան սահմաններում թեւածող՝ «Ղեկավարը թոյլատրել է սպանել հայերին» ասոյթը[91]: Ըստ նրա, այս թողտւութեան հետեւանքով 300.000 մարդկային էակներ կորցրել են իրենց կեանքը, իսկ 1894 թ. յուլիսի 1-ից ի վեր՝ աւելի քան 500 հայկական համայնքներ կործանուել են կամ փորձութիւնների ենթարկուել[92]: Այս առթիւ, հարկ է նշել, որ Բերարը մեծ նշանակութիւն չի տալիս կոտորածներին՝ քրդերի ունեցած մասնակցութեանը. «Նրանք միշտ ենթարկուել են սահմանադրական, քաղաքացիական եւ ռազմական իշխանութիւններին... եւ սպանդի ժամանակ եղել միայն իշխանութեան գործակալները, տիրոջ կամակատարները»[93]:

Մանրամասն քննարկելով հայկական տարբեր կուսակցութիւնների հիմնադրմանն առնչուող փաստերը, Բերարն Աբդուլ Համիդի հայահալած քաղաքականութեան սանձազերծումը պայմանաւորում է մասնաւորապէս հնչակեանների գործունէութեամբ: Ինչպէս նա նշում է, «հայերի գաղտնի մեքենայութիւնների առիթով իշխանութիւնների գանգատները, բնիկ մահմեդականների դժգոհութիւնը եւ անհանգստութիւնը նրա մօտ ծնունդ են տուել անյաղթահարելի սարսափների»[94]: Ուստի, 80-ական թթ. վերջերից նրա կարգադրութեամբ հայերի հանդէպ կիրառուած զանազան բռնութիւնները (եկեղեցիների խուզարկումը, դպրոցների փակումը, սպանութիւնները, արտաքսումները եւ այլն), ըստ Բերարի, կեանքի էին կոչուել միայն այն բանից յետոյ, երբ սուլթանը վերջնականապէս համոզուել էր, թէ իբր «ողջ ազգը հետեւում է կոմիտէներին»[95]: Փոքր-իսկ դրուատանքի չարժանացնելով քաղաքական կուսակցութիւնների գործունէութիւնը, կասկած իսկ չտածելով, որ «կոմիտէներն անկասկած սխալւում էին եւ ազգին մղում դէպի վտանգաւոր ուղի», նա այնուամենայնիւ խիստ քննադատութեան է ենթարկում սուլթանի որդեգրած դիրքորոշումը. «Բայց եթէ կոմիտէները խարխափում էին պարսաւելի եւ անօգտաւէտ քաղաքականութեան ոլորտում, սուլթանը պատրաստւում էր գործել շատ աւելի մեծ եւ շատ աւելի յանցաւոր մի սխալ, կարծէք կանխակալօրէն, ազգութեանը շփոթելով կոմիտէների հետ, ժողովրդին՝ մի խումբ առաջնորդների հետ»,– գրում է նա[96]: Միաժամանակ, նա համոզմունք է յայտնում, որ եթէ սուլթանը «նոյնիսկ ընդունէր կոմիտէների պահանջները, կարելի է կարծել, որ նա կարող էր ծառայել իր կառավարութեան ու իր ժողովուրդների բուն շահերին»[97]:

Ինչ վերաբերում է Աբդուլ Համիդի մօտ ցեղասպանութեան գաղափարի հասունացման մեկնաբանութեանը, ապա Բերարը ուշադրութիւնը կենտրոնացնում է գլխաւորապէս կրօնական գործօնի

վճռորոշ նշանակութեան վրայ, ընդգծում, որ համաձայն «մահմեդական հին աւանդոյթի՝ կառավարութիւնը երբեւէ չի շրջանցում հեկատոմբերը»: Բացի դրանից, նա առաջնային նշանակութիւն է տալիս մահմեդական մոլեռանդ քարոզիչների՝ սուլթանի վրայ ունեցած ազդեցութեանը, որոնք վերջինիս մօտ արմատացրել են այն գաղափարը, համաձայն որի գոյութիւն պահպանելու իրաւունք կարող էին միայն մահմեդականներն ունենալ[98]: «Այսպէս, աստիճանաբար, միանգամայն տարբեր ուղիներով... ձեւաւորուել է, աճել, ճնշող դարձել կոտորածի գաղափարը»,– եզրակացնում է նա[99]:

Այս առիթով նշենք, որ Բերարը մանրազնին վերլուծել է նաեւ Աբդուլ Համիդի կողմից կայսրութեան մահմեդական բնակչութեանը՝ մօտալուտ կոտորածներին հոգեբանօրէն նախապատրաստելու հանգամանքը: Ըստ նրա մեկնաբանութեան՝ չբաւարարուելով սոսկ կրօնական մոլեռանդութեան բորբոքմամբ, սուլթանը ջանում էր մահմեդականների շրջանում «կեանքի կոչել սոցիալական եւ քաղաքական հենքի վրայ խարսխուած ատելութիւնները»: Հէնց դրանով է նա պայմանաւորում Աբդուլ Համիդի՝ հայերի մտադրութիւնները կեղծելու նպատակով գործադրած ճիգերը: Ինչպէս գրում է Բերարը, սուլթանը հաւաստում է, որ հայերին «սատարում է Եւրոպան, որը գործելով իսլամին ստորադաս դարձնելու նպատակով եւ քրիստոնէութեան շահերի օգտին՝ պահանջում է ոչ թէ իրաւունքներ, այլ արտոնութիւններ», որոնք կարող էին մահմեդականին կախման մէջ դնել քրիստոնեայից[100]: Չբաւարարուելով սոսկ փաստի արձանագրմամբ, Բերարը խորամուխ է լինում այն հետեւանքների բացայայտման մէջ, որոնց հանգեցրել էր սուլթանի քաղաքականութիւնը եւ մատնանշում, որ «ոչ միայն ամբոխն է կարծել, թէ իր արտոնութիւններն ու շահերը վտանգուած են, այլեւ ծրագրուած բարեկարգումներին վերաբերուող լուրերն են տագնապահար արել բուն վերնախաւին»՝ առժամանակ միաւորելով նոյնիսկ սուլթանի համախոհներին եւ երիտթուրքերին[101]:

Օսմանեան իշխանութիւնների կողմից՝ 1895 թ. սեպտեմբերին Կոստանդնուպոլսում հայերին բողոքի ցոյց կազմակերպելու հնարաւորութեան ընձեռումը Բերարը դիտում է իբրեւ բացայայտ սադրանք, որը հետապնդում էր սուլթանի նենգ մտադրութիւնների կենսագործմանը հիմնաւորում տալու նպատակ: Ցոյցին անմիջապէս յաջորդած հայկական ջարդերը մայրաքաղաքում, նա համարում է «սիստեմատիկ կոտորածների սկիզբ», որոնք իշխանութիւնների կողմից ուղարկուած բանագնացների ազդանշանի հիման վրայ, ծաւալուել են զանազան նահանգներում[102]: Ըստ կանխամտածուած ծրագրի՝ ցեղասպանութեան իրականացումը նա հիմնաւորում է բազմաթիւ փաստերով, համաձայն որոնց, իշխանութիւնները պաշտօնանկ էին անում այն բոլոր աստիճանաւորներին, ովքեր ի յայտ էին բերում իրենց «անկարողութիւնը»՝ կոտորածներին առնչուող կարգադրութիւնների ի կատար ածման հարցում[103]: Ընդհանուր առմամբ, նա եզրակացնում է. «Փոքր Ասիայի կոտորածները շարունակուել են աւելի քան երկու տարի, ամայացրել մի տարածաշրջան, որն աւելի մեծ է, քան Ֆրանսիան եւ XX դարի նախաշեմին խոյացրել երեք հարիւր հազար մարդկային գլուխներից բաղկացած մի բուրգ, որը հաւանաբար կը մնայ իբրեւ այդ ժամանակի յուշարձաններից մէկը»[104]: Ինչ վերաբերում է անձամբ Աբդուլ Համիդին, ապա նա, ինչպէս նշում

© National Library of Armenia

է Բերարը, արել է ամեն ինչ՝ «պատմութեան մէջ մարդասպանի փառապանծ մականունի արժանանալու համար»[105]:

Բերարը, որի տեսադաշտից չի վրիպել մեծ տէրութիւնների կողմից հայ ժողովրդի հանդէպ դրսեւորած անցաւակից վերաբերմունքը, անվարանօրէն հաւաստել է նրանց «անուղղակի մեղսակցութիւնը» հայերի եղեռնին եւ համոզմունք յայտնել, որ նրանց ծուատած տարաձայնութիւններն Աբդուլ-Համիդին հնարաւորութիւն են ընձեռել «Հայաստանն անապատի վերածելու»[106]:

Ըստ այս ամէնի, պատահական չէ, որ Բերարի գրքին կից առաջաբանում Ֆրանսիացի խոշոր պատմաբան, Ֆրանսիական ակադեմիայի անդամ (1892 թ.) Է. Լաւիսը (1842-1922) դրան տուել է հետեւեալ բարձր գնահատականը. «Ժամանակակից քաղաքականութեան ամենակրեւոր հարցերից մէկն առաջին անգամ Ֆրանսիայում ներկայացուել է իր ամբողջութեան մէջ, կոտորածների ծագումը մեկնաբանուել է, Եւրոպայի անուղղակի մեղսակցութիւնն ապացուցուել»[107]: Մէկ այլ առիթով Լաւիսը Բերարի ուսումնասիրութիւնը միանգամայն իրաւամբ անուանել է «հիասքանչ»[108]:

Մեր կողմից վերլուծուած ելոյթներն ակնբախ են դարձնում այն մեծ հետաքրքրութիւնը, որը հայկական կոտորածների սանձազերծման պահից ի վեր դրսեւորուել է մի շարք ֆրանսիացի մտաւորականների եւ քաղաքական գործիչների կողմից[109] արեւմտահայութեան ճակատագրի նկատմամբ հայ ժողովրդի պատմութեան ամենաօրհասական ժամանակաշրջաններից մէկում: Չնայած այն բանին, որ նրանք դաւանել են միանգամայն տարբեր, երբեմն հակամէտ, քաղաքական հաւատամքներ, հայերի ցեղասպանութեան կազմակերպիչներին խարանելու, եւրոպական մեծ տէրութիւնների, այդ թւում Ֆրանսիայի, ղեկավար շրջանների վարած թրքամէտ քաղաքականութեան, հայ ժողովրդի գոյատեւման հարցում վերջիններիս ի յայտ բերած անտարբեր վերաբերմունքի քննադատութեան հարցերում սակայն, ցուցաբերել են անկողմնակալ մօտեցում եւ յանուն արեւմտահայութեան փրկութեան հանդէս եկել, ըստ էութեան, միասնական դիրքերից, առաջադրել կոտորածների կասեցման զանազան տարբերակներ: Նրանցից ոմանք ելնելով, անկասկած, քաղաքական նկատառումներից, իրենց ելոյթներում արծարծուող հարցերը, ըստ անհրաժեշտութեան, օգտագործել են քաղաքական այս կամ այն ախոյեանին կամ խմբակցութեանը պախարակելու, անգամ տապալելու միտումից դրդուած: Թէեւ նրանց ջանքերը, ցաւօք, շօշափելի արդիւնքների չեն յանգեցրել, այդուհանդերձ, անհետեւանք չեն մնալ: Ցանկանում ենք մասնաւորապէս ընդգծել այն անժխտելի աւանդը, որը նրանք ներդրել են համիդեան կոտորածների հաւաստի պատկերը ֆրանսիական հասարակութեանը ներկայացնելու գործում:

Բացի դրանից, հարկ ենք համարում չանտեսել մէկ այլ էական հանգամանք եւս: Դ. Կոշենի, Ժ. Ժորեսի եւ խորհրդարանային խմբակցութեան այլ պատգամաւորների (Ա. դը Մուն, Գ.-Ա. Հուբբարդ, Ա. Միլերան)՝ Ազգային ժողովում ծաւալած հայանպաստ գործունէութիւնը նշանաւորել է Հայկական հարցի քննարկման նոր փուլ: Նրանց ջանքերի շնորհիւ Ֆրանսիայի օրէնսդիր մարմնում առաջին անգամ յաւուր պատշաճի հանգամանալից արծարծուել են համիդեան կոտորածներին առնչուող հարցերը, որը միանգամայն նոր երեւոյթ էր, առաջընթաց քայլ՝ Հայ դատին եւ հայոց ցեղասպանութեան

նը Եւրոպայում լայն հրապարակայնութիւն տալու առպարէզում:

Ի դէպ, նշենք, որ 1896 թ. նոյեմբերի 3-ի նիստում, համաձայն Վ. Դադրեանի դիպուկ բնորոշման՝ «այլախոհ պատգամաւորների»[110] ելոյթների ազդեցութեան շնորհիւ Հանոտոն հարկադրուած է եղել ընթացք տալու «Դեղին գրքի» լոյս ընծայմանը[111]: Թէեւ դրանում հրապարակուած փաստաթղթերի մի մասն աղճատուած է, այդուհանդերձ, այն առ այսօր պահպանում է իր այժմէականութիւնը եւ համիդեան կոտորածների պատմութեան խիստ կարեւոր սկզբնաղբիւրներից է:

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1 Les Arméniens et la réforme de la Turquie. Conférence faite par M[onsieur] Albert Vandal de l'Académie française dans la salle de la Société de Géographie. Le 2 février 1897, Paris, 1897, p. 15.

2 Տե՛ս օրինակ **Գ. Մելիք-Կարագեոզեան**, *Գերմանական օգնութեան ընկերութիւնները Տաճկահայաստանի համար*, Թիֆլիս, 1901; **С. С. Степанян**, *Армения в политике империалистической Германии (конец XIX – начало XX века)*, Ереван, 1975, с. 59-63; **Y. Ternon**, *Les Arméniens. Histoire d'un génocide*, Paris, 1977, p. 131-133; **А. Дж. Киракосян**, *Великобритания и Армянский вопрос (90-е годы XIX века)*, Ереван, 1990, с. 160-181; **Մ. Գ. Ներսիսեան**, *Արեւմտահայերի կոտորածները եւ ռուս մտաւորականութիւնը 1894-1896 թուականներին* // «Պատմա-բանասիրական հանդես», 1997, թիւ 1, էջ 15-24; **Ռ. Սահակեան**, *Յոհաննես Լեփսիուսը եւ արեւմտահայերի ճակատագիրը*.– Յոհաննես Լեփսիուսը եւ հայ ժողովուրդը, Երեւան, 1998, էջ 48-62; **Ա. Ն. Հայրունի**, *Յոհաննէս Լեփսիուս. հայանուէր գործիչն ու հրապարակախօսը*, Երեւան, 2001, էջ 47-50:

3 Տե՛ս **Վ. Պողոսեան**, *Համիդեան կոտորածները եւ հայր Շարմետանը* // «Էջմիածին», 2002, թիւ Դ, էջ 72-80; նոյնի *Համիդեան կոտորածները ֆրանսիացի ժամանակակիցների հրապարակային ելոյթներում* // «Պատմա-բանասիրական հանդես», 2002, թիւ 2, էջ 47-70:

4 **E. Khayadjian**, *Archag Tchobanian et le mouvement arménophile en France*, Alfortville, 2001.

5 **Ա. Ն. Մնացականեան**, *Հայ ժողովրդի ողբերգութիւնը ոուս եւ համաշխարհային հասարակական մտքի գնահատմամբ*, Երեւան, 1965, էջ 139-141; **Ծ. Պ. Աղայեան**, *Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմութիւնից*, Երեւան, 1976, էջ 207-209, 213; **Զ. Կիրակոսեան**, *Երիտթուրքերը պատմութեան դատաստանի առաջ (19-րդ դարի 90-ական թթ.-1914 թ.)*, գիրք առաջին, Երեւան, 1982, էջ 94-101; **Г. Б. Гарибджанян**, *Геноцид армян и мировая общественность*, Ереван, 1989, с. 30-34; նոյնի *Геноцид армян перед судом истории*, *Ереван*, 1995, с. 50-54; **А. Дж. Киракосян**, նշ. աշխ., էջ 130-131, 156-157; **Ե. Ա. Գասպարեան**, *Հայասիրական շարժումը Ֆրանսիայում Առաջին աշխարհամարտի տարիներին*, Երեւան, 1999, էջ 9-14; **Ս. Պողոսեան, Կ. Պողոսեան**, *Հայկական հարցի եւ հայոց ցեղասպանութեան պատմութիւն*, հ. 1. Հայերի բնաջնջման օսմանեան քաղաքականութիւնը, Երեւան, 2000, էջ 518-519; **Ա. Ս. Խաչատրեան**, *Հայասիրական դրսեւորումները Ֆրանսիայում Սասունի ապստամբութեան ընթացքում* // «Բանբեր Երեւանի համալսարանի», 2001, թիւ 3, էջ 117-123:

6 **V. Duclert et G. Pécout**, *La mobilisation intellectuelle face aux massacres d'Arménie (1894-1900)* // Les exclus en Europe, 1830-1930. Sous la direction d'A. Guslin et D. Kalifa, Paris, 1999, p. 325-326. XIX դարի 90-ական թուականների կէսերին Հայ դատի պաշտպանութեամբ առաջինը հանդէս եկած ֆրանսիացի մտաւորականներ Կարոլին Սեւերինի (1855-1929) եւ Անրի Ռոշֆորի (1831-1913) հայանպաստ գործունէութեան մասին տե՛ս **E. Khayadjian**, նշ. աշխ., էջ 41-46:

7 **A. France**, *[Préface]*.– **A. Tchobanian**, *L'Arménie, son histoire, sa littérature, son rôle en Orient*. Conférence faite le 9 mars 1897 à la Salle de la Société de Géographie sous la présidence de M[onsieur] Anatol France, Paris, 1897, p. 6.

8 Pour l'Arménie et la Macédoine. Préface de Victor Bérard. Introduction de Pierre Quillard, Paris, 1904, p. 185.

9 A. France, *Pour l'union arménienne* // "Pro Armenia", 25 mai 1901, N 13. Սոյն յօդուածի բնագրին կատարելապէս անտեղեակ Ա. Մնացականեանը յղելով դրա հայերէն թարգմանութիւնը, որը զետեղուել է 1907 թ. Ժնեւում լոյս ընծայուած «Եւրոպացիների կարծիքը Հայկական դատի մասին» ժողովածոյում, ըստ այդմ, այն թուագրել է 1907 թուականով: Տե՛ս **Ա. Ն. Մնացականեան**, նշ. աշխ., էջ 140:

10 **A. France**, *Pour l'union arménienne*.

11 Նոյն տեղում:

12 **A. France**, *[Préface]*, p. 6.

13 Pour l'Arménie et la Macédoine, p. 172-173.

14 Նոյն տեղում, էջ 185-186:

© National Library of Armenia

15 Report of the International Conference on the situation of the Near East, held in London on 29th June 1904, London, 1904, p. 18. Տե՛ս նաեւ "Pro Armenia", 15 juillet 1904, N 90:

16 **G. Clemenceau**, *Préface.*– Les massacres d'Arménie. Témoignages des victimes, Paris, 1896. Նշենք, որ սոյն ժողովածուն տպագրութեան է պատրաստել Արշակ Զոպանեանը, որի անունը սակայն գրքում որեւէ տեղ չի յիշատակուել: Տե՛ս **E. Khayadjian**, նշ. աշխ., էջ 57:

17 **G. Clemenceau**, նշ. աշխ., էջ 5-6:

18 Նոյն տեղում, էջ 10-11:

19 **G. Clemenceau**, *La main sanglante* // "Pro Armenia", 25 novembre 1900, N 1.

20 **G. Clemenceau**, *Pour les Arméniens* // "Pro Armenia", 15 septembre 1904, N 94. Հայերի կարծեցեալ ապստամբութեան վարկածի մասին տե՛ս **Ն. Վ. Կարապետեան**, *1904 թ. Սասունի ինքնապաշտպանութիւնը.*– Հայ ժողովրդի պատմութիւն, հ. VI, Երեւան, 1981, էջ 474; **Հ. Մ. Պօղոսեան**, *Սասունի պատմութիւն (1750-1918)*, Երեւան, 1985, էջ 255-266:

21 **G. Clemenceau**, *Préface*, p 13.

22 **G. Clemenceau**, *La main sanglante.*

23 **G. Clemenceau**, *Préface*, p. 15.

24 Նոյն տեղում, էջ 16:

25 **G. Clemenceau**, *Pour les Arméniens.*

26 **G. Clemenceau**, *Rappel au devoir* // "Pro Armenia", 15 juin 1904, N 87/88.

27 Report of the International Conference..., p. 20. Տե՛ս նաեւ "Pro Armenia", 15 juillet 1904, N 90:

28 **G. Lecomte**, *Clemenceau*, Paris, 1919, p. 224.

29 Այդ մասին տե՛ս **Ш. Сеньобос**, *Третья республика 1871-1900.*– История XIX века. Под ред. Лависса и Рамбо, т. 7, М., 1939, с. 34-59; **Э. Шенон**, *Римская церковь и нетолические культы 1870-1900.*– Там же, т. 8, М., 1939, с. 60; **В. И. Антюхина-Московченко**, *Третья республика во Франции. 1870-1918*, М., 1986, с. 177-181, 190, 215:

30 **G. Clemenceau**, *Préface*, p. 14.

31 **G. Clemenceau**, *La main sanglante.*

32 Նկատենք, որ Կլեմանսոյի առաջաբանով լոյս տեսած «Հայաստանի կոտորածները» ժողովածոն լայն արձագանքների է արժանացել Ֆրանսիական մամուլում, որը մեծապէս նպաստել է «միջազգային հասարակական կարծիքի ուշադրութիւնը Հայաստանի կոտորածների վրա գաղելուն»: Այդ մասին մանրամասն տե՛ս **E. Khayadjian**, նշ. աշխ., էջ 60-62:

33 **Գ. Նգրուրեան**, *Գլեմանսօ մարդը* // «Ալիք» (Թեհրան), 10. XII. 1974, թիւ 279:

34 Տե՛ս օրինակ **G. Lecomte**, նշ. աշխ.; **G. Suarez**, *Clemenceau*, t. 1-2, Paris, 1932; **W. Williams**, *The Tiger of France*, New York, 1949; **Д. П. Прицкер**, *Жорж Клемансо. Политический портрет*, М., 1983: Համիդեան կոտորածների առթիւ Կլեմանսոյի ելոյթների մասին ակնարկ իսկ չկայ նաեւ «Հայկական հարց» հանրագիտարանում: Տե՛ս **Ռ. Սահակեան**, *Կլեմանսո.*– Հայկական հարց, Երեւան, 1996, էջ 186-187:

35 Տե՛ս **E. Khayadjian**, նշ. աշխ., էջ 75:

36 **D. Cochin**, *Contre les barbares*, Paris, 1899.

37 Ըստ Ստեփանոս Սապահ-Գիւլեանի վկայութեան՝ այս քննարկումը կազմակերպուել էր հնչակեան կուսակցութեան նախաձեռնութեամբ: Տե՛ս **Ս. Սապահ-Գիւլեան**, *Պատասխանատուները*, Պրովիդանս, 1916, էջ 173:

38 **D. Cochin**, նշ. աշխ., էջ 1:

39 Նոյն տեղում, էջ 5-6, 22:

40 Նոյն տեղում, էջ 10, 40-41:

41 Նոյն տեղում, էջ 46, 51, 89:

42 Նոյն տեղում, էջ 11:

43 Նոյն տեղում:

44 Նոյն տեղում, էջ 30:

45 Նոյն տեղում, էջ 39:

46 Նոյն տեղում, էջ 25-26:

47 Նոյն տեղում, էջ 30: Հարկ է յիշատակել, որ յանուն հայ ժողովրդի շահերի պաշտպանութեան Կոշենը հանդէս է եկել նաեւ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին:

48 **Ж. Брюа**, *Жан Жорес и колониальная проблема* // Французский ежегодник – 1958, М., 1959, с. 59.

49 **А. З. Манфред**, *Жан Жорес – борец против реакции и войны (к столетию со дня рождения).*– **А. З. Манфред**, Очерки истории Франции XVIII-XIX вв. Сборник статей. М., 1961, с. 412.

50 **Ս. Սապահ-Գիւլեան**, նշ. աշխ., էջ 173:

51 *Œuvres de Jean Jaurès. Pour la paix. T. 1. Les alliances européennes (1887-1903).* Textes ressemblés, présentés et annotés par Max Bonnafous, Paris, 1931, p. 125.

52 Նոյն տեղում, էջ 126, 132, 159:

53 Նոյն տեղում, էջ 125:

54 Նոյն տեղում, էջ 126:

55 Նոյն տեղում, էջ 136: Նշենք, որ 1896 թ., մէկ այլ առիթով, նա «Աբդուլ Համիդի հրամանով եւ մասնակցութեամբ ոչնչացուած հայերի թիւը» հաստատում է 200.000 մարդու: Տե՛ս **Ж. Жорес**, *Против войны и колониальной политики.* Редакция и вступительная статья А. З. Манфреда, М., 1961, с. 115:

56 *Œuvres de Jean Jaurès*, p. 136.

57 Արժեւորելով, օրինակ, Ժորեսի՝ նոյեմբերի 3-ի ելոյթը, Սապահ-Գիւլեանը նշել է. «Ժորեսի այդ օրուայ ճառը կը մնայ մի գլուխգործոց՝ մարդկային լեզուի ճարտարախօսութեան մէջ: Դեմոսթենէս, Ցիցերոն ունէին հրաշակերտներ, բայց նրանցից եւ ոչ մէկը յաջողել է այնպիսի կենդանի պատկեր տալ, ինչպէս արաւ Ժորեսը Սասունի 1894-ի ժողովրդական ապստամբութեան եւ կռուի իրադարձութիւնները ներկայացնելիս... Հայ յեղափոխականները, մեր նահատակները, մեր Ս. Գործը երբեք աւելի բարձր թարգման չէին կարող ունենալ»: Տե՛ս **Ս. Սապահ-Գիւլեան**, նշ. աշխ., էջ 174, 175:

58 Տե՛ս օրինակ 1897 թ. փետրուարի 22-ին Ազգային ժողովում արտասանած «Կրետէի իրադարձութիւնները» ելոյթը: Նշենք, որ Ե. Գասպարեանի կողմից իբրեւ «հայկական կոտորածներին» նուիրուած «բուռն ճառ» բնութագրուող այս ելոյթն ամենեւին էլ հայերի ցեղասպանութեանը չի աղերսւում, թէեւ դրանում եւս հանդիպում ենք այդ հարցին նուիրուած որոշ դիտարկումների: Նման արտառոց յայտարարութիւնը վկայում է Ժորեսի ելոյթի բնագրին Գասպարեանի անտեղեակութեան մասին: Տե՛ս **Ե. Ա. Գասպարեան**, նշ. աշխ., էջ 9-10 (հմմտ. Ժորեսի ելոյթի բնագրի հետ՝ *Œuvres de Jean Jaurès*, p. 140-147):

59 Նոյն տեղում, էջ 123:

60 Նոյն տեղում, էջ 133: Ժորեսի ելոյթի բնագրին անծանօթ Ջ. Կիրակոսեանը, յենուելով Սապահ-Գիւլեանի հաղորդած անստոյգ տեղեկութիւնների վրայ, խնդրոյ առարկայ երկխօսութիւնը ներկայացրել է խեղաթիւրուած ձեւով: Ըստ նրա, Ժորեսն իբր յայտարարել է, թէ «պատրաստ է ետ վերցնելու իր ասածը, եթէ Ֆրանսիան ջնջի վերջին չորս տարիների իր պատմութիւնը»: Տե՛ս **Ջ. Կիրակոսեան**, նշ. աշխ., էջ 97:

61 *Œuvres de Jean Jaurès* p. 127.

62 Նոյն տեղում, էջ 131:

63 Նոյն տեղում, էջ 139:

64 Նոյն տեղում, էջ 132:

65 Նոյն տեղում, էջ 141:

66 Նոյն տեղում, էջ 150:

67 Նոյն տեղում, էջ 168:

68 Նոյն տեղում, էջ 140, 142:

69 **F. de Pressencé**, *La question arménienne* // "Revue des deux mondes" (Paris), 3e livraison, 1er décembre 1895, t. 132.

70 Նոյն տեղում, էջ 675:

71 Նոյն տեղում, էջ 683-684:

72 Pour l'Arménie et la Macédoine, p. 85, 93.

73 Sassoun et les atrocités hamidiennes. Genève, 1904, p. 13, 14.

74 Pour l'Arménie et la Macédoine, p. 23.

75 **F. de Pressencé**, *Les massacres d'Arménie* // "Pro Armenia", 1er juin 1904, N 86.

76 Sassoun et les atrocités hamidiennes, p. 15, 17.

77 Նոյն տեղում, էջ 3; Pour l'Arménie et la Macédoine, p. 33, 38; **F. de Pressencé**, *Les massacres d'Arménie.*

78 **F. de Pressencé**, *Asie Mineure* // "Pro Armenia", 15 septembre 1904, N 94.

79 Sassoun et les atrocités hamidiennes, p. 17.

80 Pour l'Arménie et la Macédoine, p. 40.

81 **F. de Pressencé**, *Les massacres d'Arménie.*

82 **F. de Pressencé**, *Asie Mineure*; տե՛ս նաեւ Une lettre de M. Pressencé // "Pro Armenia", 15 avril 1904, N 83.

83 **F. de Pressencé**, *Les massacres d'Arménie.*

84 Նոյն տեղում:

85 **Ս. Սապահ-Գիւլեան**, *Ֆրանսիան եւ հայոց խնդիրը* // «Նոր-դար», 6. I. 1897, թիւ 2:

86 **V. Bérard**, *Le sultan, l'islam et les puissances*, Paris, 1907; նոյնի *La révolution turque*, Paris, 1909; նոյնի *La mort de Stamboul. Considérations sur le gouvernement des Jeunes-Turcs*, Paris, 1913.

87 **Aghassi**, *Zeïtoun depuis les origines jusqu'à l'insurrection de 1895.* Préface par Victor Bérard, Paris, 1897; Pour l'Arménie et la Macédoine.

88 **V. Bérard**, *La politique du sultan* // "Revue de Paris", 15 décembre 1896; 1er janvier 1897; 15 janvier 1897. Իրավիճակի հաւաստի պատկերն արտացոլող Բերարի այս յօդուածաշարը մեծապէս նպաստել է, անշուշտ, նահատակուող արեւմտահայութեան համակիրների շարքերի ստուարացմանը Ֆրանսիայում: Ինչպէս հաւաստել է Սապահ-Գիւլեանը, «Հայաստանի եւ հայոց բարեկամների թիւը գնալով աճագին ծաւալ է ստանում Պարիզում: "Revue de Paris"-ի մէջ պ. Վիկտոր Բերարի գրած յօդուածներն իրենց անմիջական ազդեցութիւնն ունեցան, վասնզի աւելի քան յիսուն հոգի պատգամաւորների ժողովի անդամներից իրենց առանձին համակրութիւնն են յայտնել պ. յօդուածագրին իւր շահագրգիռ յօդուածների համար: Նրանցից ոմանք առանձնակի շեշտած են, որ իրենք պատրաստ են հարկաւոր ժամանակին արձագանք տալ իւր ձայնին պատգամաւորների ժողովի մէջ»: Տե՛ս *Հայաստանի բարեկամները Ֆրանսիայում* // «Նոր-դար», 16. I. 1897, թիւ 6:

89 **V. Bérard**, *La politique du sultan*, Paris, 1897.

90 Նոյն տեղում, էջ 56, 64, 72:

91 Նոյն տեղում, էջ 22, 27, 30, 74, 248:

© National Library of Armenia

92 Նոյն տեղում, էջ 75:
93 Նոյն տեղում, էջ 71-72: Տե՛ս նաեւ էջ 52:
94 Նոյն տեղում, էջ 164:
95 Նոյն տեղում, էջ 166:
96 Նոյն տեղում, էջ 166, 175:
97 Նոյն տեղում, էջ 176:
98 Նոյն տեղում, էջ 189-190, 192:
99 Նոյն տեղում, էջ 192-193:
100 Նոյն տեղում, էջ 240:
101 Նոյն տեղում, էջ 241-243:
102 Նոյն տեղում, էջ 195:
103 Նոյն տեղում, էջ 204-206:
104 Նոյն տեղում, էջ 200:
105 Նոյն տեղում, էջ 358:
106 Նոյն տեղում, էջ 196, 329:
107 **E. Lavisse**, *Préface*.– **V. Bérard**, նշ. աշխ., էջ II:
108 **E. Lavisse**, *Notre politique orientale* // "Revue de Paris", 15 mai 1897, p. 275. Բերարի գիրքը միեւնոյն բարձր գնահատականին է արժանացրել Ա. Զոպանեանը. տե՛ս **A. Tchobanian**, նշ. աշխ., էջ 10:
109 Սոյն յօդուածում մենք շրջանցել ենք Հայ դատի անմնացորդ նուիրեալ Պիեռ Քիւառի գործունէութիւնը, որին կ'անդրադառնանք մեր հետագայ հրապարակումներում:
110 **V. Dadrian**, *Histoire du génocide arménien. Conflits nationaux des Balkans au Caucase*, Paris, 1996, p. 160. Տե՛ս նաեւ **Y. Ternon**, նշ. աշխ., էջ 132:
111 Documents diplomatiques. Affaires arméniennes. Projets de réformes dans l'Empire Ottoman, 1893-1897, Paris, 1897; Documents diplomatiques. Affaires arméniennes. (Suplément), 1895-1896, Paris, 1897.

ՔԱՋԲԵՐՈՒՆՈՒ ԲԱՆԱՀԱՒԱՔԶԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆԸ

Ալվարդ Ղազիյեան

Հայ ժողովրդի նիւթական ու հոգեւոր մշակոյթի գանձերը մոռացումից ու կորստից փրկելու, նրա առաջընթացին ըստ ամենայնի նպաստելու գործում իր նշանակալից լուման է ներդրել յանիրաւի ստուերում մնացած մի համեստ գործիչ, որը գիտական, հասարակական շրջանակներում յայտնի էր Քաջբերունի ծածկանունով:

Քաջբերունին՝ Գաբրիէլ Տէր-Յովհաննիսեանը ծնուել է 1837 թ. Ուզունթալա գիւղում (այժմ ՀՀ Տաւուշի մարզի Իջեւանի ենթատարածքի Այգեհովիտ գիւղ) քահանայի ընտանիքում: 1858 թ. աւարտելով Թիֆլիսի Ներսիսեան դպրոցը, մեկնել է Մոսկուա եւ 1864 թ. վերջացրել ուսումնառութիւնը, ստացել բժշկի մասնագիտութիւն: Նրա ուսման ծախսերը հոգացել է ղզլարցի Հ. Պիտունեանցը, որին ամբողջ կեանքում Քաջբերունին յիշել է խոր երախտագիտութեամբ:

Աւելի քան կէս դար Քաջբերունին ծառայել է սկզբում իբրեւ գաւառական, ապա՝ հիգիենիկ բժիշկ: Իր մասնագիտական գործունէութիւնը նա սկսել է Ստաւրոպոլի նահանգում (1867-1871 թթ.), իսկ 1871 թուականից այն ընթացել է Անդրկովկասում: Աշխատել է իբրեւ գաւառական բժիշկ Ալեքսանդրապոլում (1871-1875 թթ.), Շարուր-Դարալագեազում (1875-1879 թթ.), կրկին Ալեքսանդրոպոլում (1879-1885 թթ.), սակայն այս անգամ իբրեւ ուսուցիչ, ապա նորից վերադարձել է իր մասնագիտութեանը Բաքուի նահանգի Սաղեան քաղաքում, Շամախու գաւառում (1885-1898 թթ.): 1899-1916 թթ. նա վարում է Բաքու քաղաքի հիգիենիկ բժշկի պաշտօնը: Քաջբերունին կամաւոր կերպով՝ իբրեւ զինուորական բժիշկ մասնակցել է 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին: 1916 թ. անցել է Թոշակի, հաստատուել հայրենի գիւղում, ուր եւ 1920 թ. մարտի 9-ին կնքել է իր մահկանացուն:

Քաջբերունին ապրել է գաւառական բժշկի չարքաշ ու դժուարին կեանքով: Ծառայողական պարտականութիւնների բերումով նա շրջագայել է Անդրկովկասում, եղել է բազմաթիւ բնակավայրերում, մօտիկից ծանօթացել է թէ՛ ժողովրդի կեանքին, կենցաղին, ծէսերին, սովորութիւններին, տօներին, բառ ու բանին, թէ՛ տուեալ վայրի բնական, աշխարհագրական միջավայրին, պատմա-մշակութային կանգուն ու աւեր յուշարձաններին: Մասնագիտութեամբ լինելով բժիշկ, բայց ունենալով լայն հնարաւորութիւններ, շնորհիւ հիմնաւոր հայկական կրթութեան ու աստուածատուր կարողութեան, նա մասնագէտ գիտնականի մօտեցումներ է ցուցաբերել հայագիտական այն բնագաւառների հանդէպ, որոնց առնչուել ու որոնցով զբաղուել է: Նրա քննախոյզ հայեացքի տեսադաշտում են եղել հայ գրականութիւնն ու ժողովրդագիտութիւնը, հայ ժողովրդի պատմութեան հին ու նոր իրողութիւնները, հնագիտութիւնն ու վիմագրութիւնը, բժշկութիւնը, դպրոցն ու թատրոնը, հայ հասարակութեանը յուզող հրատապ խնդիրները: Քաջբերունին խորապէս ապրել է մայր ժողովրդի XX դարասկզբի ողբեր-

© National Library of Armenia